

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ,
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ. ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԵՐՆ ՈՒ
ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Սույն ձեռնարկը մշակվել է «Հայաստանում մարդու իրավունքների խթանման և Սարդու իրավունքների պաշտպանի հաստատության վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը համատեղ իրականացվում է ՀՀ Ազգային ժողովի և Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից՝ Նիդերլանդների զարգացման ծրագրերի հարցերով նախարարի ֆինանսական աջակցությամբ:

@ Միավորված ազգերի կազմակերպության ծրագիր
Երևան, 2005

Ֆրանկ ՕՐՏՈՆ
Միջազգային փորձագետ

Գենյա ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ազգային փորձագետ

Թերեզա ԽՈՐՈՋՅԱՆ
Ծրագրի Համակարգող



Armenia



Ambassade van het
Koninkrijk der Nederlanden

Բովանդակություն

Նախաբան.....	3
Ընդհանուր տեղեկություններ Օմբուդսմանի հաստատության վերաբերյալ.....	4
Ստեղծման պատմությունը, միջազգային փորձը, հայաստանյան մոդելը	4
Մարդու իրավունքներ, իրավունքի գերակայություն և լավ կառավարում.....	13
Մարդու իրավունքներ	13
Իրավունքի գերակայություն	18
Լավ կառավարում	20
Ճիշտ գործելակերպ	22
Արդար գործելակերպ.....	23
Անկողմնակալ գործելակերպ	24
Անհատական բողոքների քննարկում	25
Աշխատանքի հիմնական մեթոդները	25
Ո՞վ կարող է բողոք ներկայացնել և ինչպե՞ս	26
Բողոքի ընդունելիությունը	28
Հետագա ընթացքը	30
Գործերի օրինակներ	30
Խնդրի լուծում նախնական շփման ընթացքում	30
Օգտակար բողոքներ.....	32
Ստեղծագործական լուծումներ	34
Վերադաս մարմիններին դիմելը	36
Մի քանի խախտումներով գործեր.....	37
Հրատապ գործեր	39
Դատարան դիմելը.....	40
Հրապարակային քննադատություն	40
Այլ գործունեություն.....	41
Սեփական նախաձեռնությամբ քննվող գործեր	41
Ստուգումներ	41
Օրենսդրության վերլուծություն և օրենսդրական առաջարկներ.....	43
Զեկույցներ միջազգային մարմիններին և կազմակերպություններին	44
Կանխարգելիչ միջոցառումներ	44
Հավելվածներ.....	46
1. Օմբուդսմանի հաստատության ստեղծումը	46
2. Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության կառուցվածքը.....	49
3. Իրավունքի գերակայություն	52
4. Հանրային ծառայողների պատշաճ գործելակերպի ուղեցույց	53
5. Բողոքների քննարկման ընթացքը /սխեմա/	55
6. Բողոքների օրինակների ուսումնասիրություններ	56
7. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը	59
8. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը /քաղվածք/	70
9. Փարիզյան սկզբունքներ	72
10. Հիմնարար իրավունքների ցանկեր	76

Նախարան

Սույն ձեռնարկը պատրաստվել է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի միջազգային փորձագետ Ֆրանկ Օրտոնի և ազգային փորձագետ Գենյա Պետրոսյանի կողմից «Մարդու իրավունքներ, լավ կառավարում, իրավունքի գերակայություն. Մարդու իրավունքների պաշտպանի դերն ու կարևորությունը» թեմայով ուսուցանողների վերապատրաստում իրականացնելու նպատակով:

Ձեռնարկը մշակվել է «Հայաստանում մարդու իրավունքների խթանման և Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման» ծրագրի աջակցությամբ: Ծրագիրը համատեղ իրականացվում է ՀՀ Ազգային ժողովի և Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից՝ Նիդերլանդների զարգացման ծրագրերի հարցերով նախարարի ֆինանսական աջակցությամբ:

Սույն ձեռնարկի նպատակը Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության և նրա գործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ ամբողջական և խորքային պատկերացում ձևավորելն է: Այն կարող է օգտակար լինել հանրային ծառայողներին հետևյալ հիմնահարցերի լիարժեք ընկալման առումով.

- Մարդու իրավունքների, լավ կառավարման և իրավունքի գերակայության կարևորությունն ու կիրառելիությունը,
- Օմբուդսմանի հաստատության դերը այս համատեքստում,
- Հաստատության քաղաքականությունը, հատկապես նրա դիրքորոշումը շարքային քաղաքացիների հետ հարաբերություններում հանրային ծառայողների կողմից ցանկալի և ակնկալվող վարքագծի վերաբերյալ, ինչպես նաև այլ վարքագիծ դրսևորելու դեպքում քննադատություն արտահայտման ու հաղորդման եղանակները,
- Հաստատության աշխատանքի մեթոդները՝ հատուկ ուշադրություն դարձնելով անհատական գործերին, և
- ինչը պակաս կարևոր չէ, պետական մարմինների և հանրային ծառայողների կողմից հաստատության միջնորդություններին պատշաճ կերպով պատասխանելու կարգը:

Օմբուդսմանի հաստատությանը բնորոշ առանձնահատկություններից է քննություն իրականացնելու համար իրեն վերապահված լիազորություններ ունենալը*։ Այդ լիազորությունները տարբեր հաստատությունների մոտ տարբեր կարող են լինել, սակայն որքան մեծ են այդ լիազորությունները, այնքան ավելի բարձր է նրա գործունեության հեղինակությունը և ազդեցությունը հանրային գործընթացների թափանցիկության վրա։ Որպես կանոն, Օմբուդսմանը իրավասու է ծանոթանալ ցանկացած փաստաթղթի կամ տեղեկության, որին տիրապետում է հարցվող պետական մարմինը, այդ թվում՝ զինվորական ստորաբաժանումներն ու ազատազրկման վայրերը, եթե դրանց նկատմամբ տարածվում է Օմբուդսմանի իրավասությունը։ Օմբուդսմանի կողմից տեղեկություններ ստանալու իրավունքը չի կարող սահմանափակվել գաղտնիության պատճառաբանությամբ։

Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանը օժտված է քննություն իրականացնելու լայն լիազորություններով, որոնցից մի քանիսը թվարկված են ստորև.

- **անարգել այցելել ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն, ներառյալ՝ գորամիավորումներ, անձանց հարկադրական պահման վայրեր, այդ թվում՝ նաև նախնական կալանքի եւ ազատազրկման վայրեր,**
- **ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջել եւ ստանալ բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր /դատարանների նկատմամբ որոշակի վերապահումով/,**
- **իրավասու պետական մարմիններին հանձնարարել բողոքի ուսումնասիրության ընթացքում պարզելու ենթակա հարցերի վերաբերյալ անցկացնել փորձագիտական հետազոտություններ եւ պատրաստել եզրակացություններ.⁹**

Օմբուդսմանի առաջարկությունն իրենից ներկայացնում է խորհուրդ՝ խնդրո առարկա հիմնահարցի կարգավորման վերաբերյալ։ Այն կարող է համապատասխան պետական մարմնին ուղղված պահանջ պարունակել՝ ապօրինի կամ չհիմնավորված որոշումը վերանայելու վերաբերյալ։ Հնարավոր է նաև, որ Օմբուդսմանը փորձի «հաշտեցման» հնարավորություն գտնել բողոք բերած անձի և համապատասխան պետական մարմնի միջև կամ միջնորդություն ներկայացնի բողոք բերած անձին փոխհատուցում վճարելու վերաբերյալ։ Հնարավորության դեպքերում Օմբուդսմանը փորձում է առկա խնդիրների համար գտնել իրագործելի և արդարացի լուծումներ, և նման լուծումներ փնտրելիս նա կարող է լինել հնարամիտ և ճկուն՝ սահմանափակված չլինելով պետական մարմիններին բնորոշ ձևական ընթացակարգերով։

Այնուհանդերձ, Օմբուդսմանը կարող է նաև ձեռնարկել այլ, ավելի ազդեցիկ քայլեր։ Նախ և առաջ, Օմբուդսմանի առաջարկությունը չընդունող պետական մարմինը կարող է հրապարակային քննադատության ենթարկվել զանգվածային լրատվամիջոցներում։ Հաշվի առնելով Օմբուդսմանի հաստատության վստահելիությունը, նրա բարոյական հեղինակությունը և նրա փաստարկների հիմնավորվածությունը, պետական մարմինները կփորձեն խուսափել նման քննադատությունից։ Քննադատությունը և առաջարկությունները կարող են ներկայացվել նաև տվյալ պետական մարմնի վերադասին, այդ թվում՝ համապատասխան նախարարության, խորհրդարանի, պետության ղեկավարի մակարդակով։ Օմբուդսմանի որոշ հաստատությունների

*Քննություն իրականացնելու լիազորությունները չպետք է ընկալվեն դատավարական լիազորությունների իմաստով։

Հայաստանում «Պաշտպանը չի ենթարկվում պետական կամ տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի»:¹²

«Պաշտպանի որոշումների վրա ազդելու նպատակով նրա գործունեությանը միջամտելը կամ պաշտոնատար անձանց կողմից Պաշտպանի՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը կամ սահմանված ժամկետներում նյութեր կամ փաստաթղթեր չներկայացնելը, Պաշտպանին սպառնալը կամ նրան վիրավորանք հասցնելն առաջացնում է պատասխանատվություն՝ դատավորի կամ դատարանի հանդեպ համանման խախտումների համար նախատեսված կարգով եւ չափով»:¹³

Օմբուդսմանի հաստատության անկախությունը երաշխավորելու նպատակով Օմբուդսմանը և նրա աշխատակիցները, որպես կանոն, օժտված են բավականին լայն անձեռնմխելիության իրավունքով: Նույն այդ նպատակով, Օմբուդսմանի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել միայն որոշակի, խիստ սահմանափակ, օրենքում մանրամասն նկարագրված հիմքերի առկայության դեպքում: Որպես կանոն, Օմբուդսմանը բարձր աշխատավարձ է ստանում:

Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանը օժտված է լայն անձեռնմխելիության իրավունքով, նրա լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել միայն խիստ որոշակի դեպքերում, և օրենքի համաձայն Պաշտպանի աշխատավարձը հավասար է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահի աշխատավարձին:

Անկախության սկզբունքը սերտորեն փոխկապակցված է անկողմնակալության և անաչառության սկզբունքների հետ: Օմբուդսմանը բողոք բերած անձի ներկայացուցիչը չէ, սակայն պարտավոր է իր եզրակացություններն ու առաջարկությունները ներկայացնելիս լինել ոչ միայն անկախ, այլ նաև՝ անկողմնակալ և անաչառ:

Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանը իր գործունեությունն իրականացնում է անհատական բողոքների հիման վրա, սակայն բողոք բերող անձի ներկայացուցիչը չէ, և իր լիազորություններն իրականացնում է անկախ, անկողմնակալ և անաչառ կերպով:

Օմբուդսմանի հաստատության իրավասությունն ու լիազորությունները տարբեր երկրներում տարբեր են: Հաճախ հանդիպող և արդյունավետ կառույց է հանդիսանում պետական մակարդակով հզոր հաստատությունը, որի իրավասությունը տարածվում է բոլոր պետական և տարածքային մարմինների վրա: Այնուհանդերձ, որոշ ոլորտներ կամ անձինք կարող են երբեմն դուրս մնալ Օմբուդսմանի իրավասության դաշտից կամ առանձնակի կարգավորման ենթարկվել, օրինակ՝ նման կարգավորման առարկա կարող է լինել դատական համակարգը՝ ելնելով վերջինիս անկախության սկզբունքի հարգման անհրաժեշտությունից: Որոշ դեպքերում ստեղծվում են Օմբուդսմանի հատուկ հաստատություններ՝ կապված առանձին ոլորտների կամ հարցերի հետ, օրինակ՝ երեխաների Օմբուդսման, փոքրամասնությունների Օմբուդսման կամ գենդերային հիմնախնդիրների Օմբուդսման: Որոշ երկրներում համապետական

¹² | ՕՅ՝ Ռ՝ 1ձ՝ ԸՌ՝ 3 | Բձ՝ Մ՝ Կ՝ ԸՅ՝ ԵԾ՝ ԸՊ՝ ԸՆ՝ Մ՝ Կ՝ 5-Ռ՝ 1՝ Նձ՝ 1՝ 3 | 1:

¹³ | ՕՅ՝ Ռ՝ 1ձ՝ ԸՌ՝ 3 | Բձ՝ Մ՝ Կ՝ ԸՅ՝ ԵԾ՝ ԸՊ՝ ԸՆ՝ Մ՝ Կ՝ 18-Ռ՝ 1՝ Նձ՝ 1՝ 3 | 1:

միջոցներ ձեռնարկել: Գործը քննարկելուց բացի, Օմբուդսմանը կարող է նախաձեռնել ստուգումներ, օրենքների ուսումնասիրություններ և հանդես գալ հայտարարություններով: Այնուհանդերձ, բավական հաճախ հաստատությունը սեփական նախաձեռնությամբ իրականացնում է այլ միջոցառումներ, օրինակ, կանխարգելիչ քարոզարշավներ, որոնց նպատակն է բարձրացնել հանրային ծառայողների կամ շարքային քաղաքացիների իրազեկությունը: Նման աշխատանքներ կարող են իրականացվել զանգվածային լրատվամիջոցների կամ ուղղակի հասարակայնության հետ կապերի ծրագրերի միջոցով: Օմբուդսմանը կարող է նաև որոշակի գործունեություն իրականացնել՝ օրենսդրական փոփոխությունների և լրացումների կատարման գործընթացի վրա ներազդելու նպատակով:

Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանն իրավասու է նախաձեռնել ստուգումներ, ուսումնասիրել օրենքներ և որոշակի աշխատանքներ իրականացնել կառավարության ու խորհրդարանի հետ օրենսդրական բարեփոխումներ կատարելու ուղղությամբ, մասնավորապես, օգտագործելով կառավարության և խորհրդարանի նիստերին մասնակցելու և ելույթ ունենալու իր իրավունքը, ինչպես նաև կարող է սեփական նախաձեռնությամբ այլ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնել, այդ թվում՝ խորհրդատվական և տեղեկատվական քարոզարշավներ:
Պաշտպանն իրավասու է նաև բողոքի քննարկման ընթացքում «հանձնարարել իրավասու պետական մարմիններին անցկացնելու որոշակի փորձագիտական հետազոտություններ»¹⁷:

Որպես կանոն, Օմբուդսմանի հաստատությունը օժտված է ճկուն լիազորություններով և կարող է ստեղծագործաբար մոտենալ իր լիազորությունների իրականացմանը: Հետևաբար, հաստատության գործունեության բնույթը կարող է տարբեր լինել առանձին պետություններում: Այնուհանդերձ, միջազգային կապերի և ցանցային գործակցության շրջանակներում փորձի փոխանակման արդյունքում ձևավորվել է Օմբուդսմանական գործունեության որոշակի ընդհանուր պրակտիկա:

Գոյություն ունեն մի շարք այդպիսի ցանցեր: Մարդու իրավունքների պաշտպանության մանդատով օժտված Օմբուդսմանների հաստատությունները համագործակցում են մարդու իրավունքների այլ հաստատությունների հետ, ինչպիսիք են, օրինակ, Մարդու իրավունքների հանձնաժողովները ՄԱԿ-ի հովանու ներքո՝ առաջնորդվելով վերոհիշյալ Փարիզյան սկզբունքներով: Երկամյա համաշխարհային մակարդակով անցկացվող հանդիպումների միջև ընկած ժամանակահատվածում ցանցի եվրոպական անդամներն անցկացնում են առանձին հանդիպումներ Եվրոպայի խորհրդի և Մարդու իրավունքների հանձնակատարի հովանու ներքո:¹⁸

Մարդու իրավունքների ոլորտում հստակ մանդատ ունեցող կամ չունեցող Օմբուդսմանի հաստատությունները ցանցային գործակցություն են իրականացնում Միջազգային Օմբուդսմանի ինստիտուտի (IOI) հովանու ներքո, որը գտնվում է Կանադայի Ալբերտա քաղաքում: Այստեղ ևս իրականացվում են գլոբալ և ռեգիոնալ աշխատանքներ, չորս տարին մեկ գումարվում են համաշխարհային մակարդակով անցկացվող հանդիպումներ, իսկ Եվրոպայում՝ IOI-ի եվրոպական մասնաճյուղի, Եվրոպայի խորհրդի և Մարդու իրավունքների հանձնակատարի օժանդակությամբ երկու տարին

¹⁷ | Ø³ ñ¹ áó Çñ³ | áóYúY»ñÇ á³ Bì á³ YÇ Û³ èÇYŞ ĐĐ ún»YúÇ 12-ñ¹ Ná¹ í³ ÍÇ 1-ÇY Û³ èÇ 4-ñ¹ Í»ì :
¹⁸ ° í ñáá³ lÇ ÈáñÑñ¹Ç Û³ È³ ñ³ ñY»ñÇ Í áÛÇí »Ç ÁÇí R (97) 14 ³ è³ Ç³ ñí .. ÁÇí (97) 11 µ³ Y³ Ó³:

մեկ գումարվում են կլոր սեղաններ:¹⁹ Եվրոպական մակարդակով գործում են նաև անկախ Եվրոպական Օմբուդսմանի ինստիտուտը (EOI) և ռեգիոնալ մակարդակով ցանցեր, որոնք կազմակերպվում և գործում են ՄԱԶԾ-ի և ԵԱՀԿ-ի հովանու ներքո:

Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը մասնակցում է միջազգային ցանցերի աշխատանքին, որոնք, մասնավորապես, կազմակերպվում են Միավորված ազգերի կազմակերպության և Եվրոպայի խորհրդի հովանու ներքո:

* * * * *

¹⁹ օր նաձՅ ՍՀ ԷանՆհ՛Շ ՍՅ ԷՅ ճՅ ճՅ՛ճՅ ԻճՍՀ՛ի ՝Շ ԱՇի R (85) 13 Յ թՅ Շճ ճի սՍմաճ՛եՍՅ ՂՇՆճ ըի Յի ճոՁՍՅ Ղ ՝ճճճ ճճճճ՛Է՛ ճոՁՁի Յ Ի Յ Ղ՛ճ Ս ճճ՛ի ճոՁՁոՂՂ՛ճճՅ՛ճՅ՛, ՛՛ ճճ՛ Ղճ Օ՛՛ ԱՇի (85) 8՛ Յ Ղ՛ճ Ս ճճ՛ի ճոՁՁոՂՂ՛ճճՅ՛ճՅ՛ սՍմաճ՛եՍՅ ՂՂ՛ճճՅ՛ճՅ՛ ՍՇՇ՛ ՛՛ Յ Ղ՛ճ Ս ճճ՛ի ճոՁՁոՂՂ՛ճճՅ՛ճՅ՛ սՍմաճ՛եՍՅ ՂՂ՛ճճՅ՛ճՅ՛ ճո՛ օր նաձՅ ՍՀ ԷանՆհ՛Շ ՍՇՇ՛ ՛՛ Նճ ՍՅ՛. ճճ՛ Ի ճոՁՁՁՁ՛ՂՂ՛ ՂՂ՛ ըՇՂ՛. ՝ճ՛ Ի ճո՛ ճճ՛ Յ՛ ԱՁԱ՛ճՂՂ՛ ՂՂ՛ ԷՂՂ՛ ճոՂՂ՛ ՝ճ՛ ՝Ղ՛ օր նաձՅ ՍՀ ԷանՆհ՛Շ ՍՇՇ՛ ՛՛ ՍՅ ԷՅ ճՅ ճՅ՛ճՅ ԻճՍՀ՛ի ՝Շ ԻճՍՀ՛ճ 1985Ձ. ը՝ճ՛ ՝ՂՂ՛ճճՅ՛ 23-ՇՂ՛:

Մարդու իրավունքներ, իրավունքի գերակայություն և լավ կառավարում

Մարդու իրավունքներ

Ընտրելով ժողովրդավարության ուղին և վավերացնելով մարդու իրավունքներին վերաբերող միջազգային համաձայնագրերը, որոնցից հարկ է հիշատակել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, Հայաստանը հանձն է առել կառուցել բոլոր քաղաքացիների նկատմամբ հարգանքի և արդարացի ու հավասար վերաբերմունքի վրա հիմնված հասարակություն: Մարդու իրավունքները ներառում են պետության և անհատի փոխհարաբերությունները: Համայն մարդկությունը փորձում է գտնել բոլորի հավասար արժեքը փոխադարձաբար հարգելու ընդհանուր համակարգ: Մարդու իրավունքները կրում են սահմանադրական բնույթ և ենթակա են պարտադիր պահպանման պետության կողմից:

Մարդկանց մեծ մասի համար մարդու իրավունքները թվում են հեռու և օտարված մի երևույթ: Դրանք ներկայացվում են որոշակի արարողակարգային փաստաթղթերի մեջ, թույլ առնչություն ունենալով փաստացի իրողությանը և այն անձանց առօրյա կյանքին, ում համար որ նախատեսված են: Երբ պետական գործիչներն անընդհատ կրկնում են մարդու իրավունքների, իրավունքի գերակայության և լավ կառավարման մասին, նրանք այդ հասկացությունները, որպես կանոն, օգտագործում են որպես քաղաքական առումով «կոռեկտ» և բավական սին արտահայտություններ: Վավերացնելով մարդու իրավունքներին վերաբերող կոնվենցիաներ, քաղաքական գործիչները համարում են, որ իրենք լավ հասարակության ջատագովներ են, սակայն երբ գործը հասնում է դրանց փաստացի կիրառմանը, ապա անհրաժեշտ միջոցների տրամադրման հարցում նրանք կարող են նույնչափ շահագրգռված չլինել: Հաշվի առնելով մարդու իրավունքների կոնվենցիաների սկզբնական հռչակումից ի վեր արձանագրված բոլոր չարաշահումները, կարելի է կատարել հետևյալ հարցադրումը. արդյո՞ք մարդու իրավունքների պահպանումն իսկապես հիմնված է անկեղծ վճռականության վրա:

Հիմնավոր հարցադրում կարելի է կատարել այն մասին, թե մարդու իրավունքների պահպանումը արդյոք միշտ է հիմնված անկեղծ վճռականության վրա:

Այնուհանդերձ, մարդու իրավունքների պաշտպանությունը, ինչպես և ժողովրդավարությունը, իրենք ինքնին լուծումներ չեն հանդիսանում. դրանք հասարակական կյանքի բարելավման հիմքեր են ստեղծում, մինչդեռ ողջ հասարակությունից ջանքեր են պահանջվում այդ չափանիշները իրագործելու համար: Պետության կողմից ճանաչված մարդու իրավունքները պետք է փոխանցվեն մարդկանց: Այս գործընթացում էական դեր կարող է խաղալ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը:

Մարդու իրավունքներն իրականացնելու համար պահանջվում է հասարակության բոլոր անդամների ակտիվ ներգրավումը: Այս գործընթացում էական դեր կարող է խաղալ Մարդու իրավունքների պաշտպանը:

Միավորված ազգերի կազմակերպությունը, ինչպես նաև Եվրոպայի խորհուրդը Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման նպատակով առաջարկել են հիմնադրել մարդու իրավունքների ազգային հաստատություն՝ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը:

Օժտված լինելով մարդու իրավունքներին վերաբերող կոնվենցիաների «պահապանի» լիազորություններով, մարդու իրավունքների ազգային հաստատությունը ունի եզակի հնարավորություն՝ վերածելու միջազգային փաստաթղթերում տեղ գտած բարձր գաղափարները իրական գործողությունների: Երբ հաստատությունը ստանում է բողոքներ շարքային քաղաքացիներից և դրանց կապակցությամբ հիշատակում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան կամ Միավորված ազգերի կազմակերպության քաղաքացիական և քաղաքական իրավունքների, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վերաբերյալ 1966թ. միջազգային դաշնագրերը, իրական անհատի և փաստաթղթում արտահայտված ձգտումների միջև փոխադարձ կապ է ստեղծվում: Այս համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է գալիս որպես նշված սկզբունքների պաշտպանության և խթանման ազգային ենթակառուցվածք:

Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը պետք է հանդես գա որպես ազգային մակարդակով միջազգային սկզբունքների իրագործման երաշխավոր:

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերից հարկ է հիշատակել հատկապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, քանի որ այս կոնվենցիայով նախատեսված իրավունքների խախտման պարագայում Ստրասբուրգի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կարող են կիրառվել որոշակի սանկցիաներ:

Ամփոփ ձևակերպումով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան անդրադառնում է հետևյալին.

- *Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով:*

- *Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նսեմացնող վերաբերմունքի կամ պատժի և չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում:*

- *Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք և պաշտպանված է անօրինական կալանքից, ձերբակալումից կամ ազատագրկումից:*

- *Յուրաքանչյուր ոք ունի արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:*

- *Յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցված օրենքին համապատասխան: Ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել որևէ գործողության կամ անգործության կատարման մեջ, որը կատարման պահին քրեական հանցագործություն չի համարվել:*

- *Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:*

- *Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր մտքերն ազատորեն արտահայտելու իրավունք:*

- *Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք:*

- *Ամուսնական տարիքի հասած տղամարդիկ ու կանայք ունեն ամուսնանալու և*

ընտանիք կազմելու իրավունք:

- Բոլոր մարդկանց համար այս իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնության պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների խախտման պարագայում Ստրասբուրգի Եվրոպական դատարանի կողմից կարող են կիրառվել որոշակի սանկցիաներ:

Մարդու իրավունքները նախ և առաջ սահմանում են ընդհանուր նորմեր և սկզբունքներ ազգային օրենսդրության և դատական համակարգի, ինչպես նաև պետական կառավարման մարմինների գործունեությունը կարգավորելու համար: Դրանք օրենքների մշակման ուղեւիշներ են: Դրանք սահմանում են չափանիշներ խտրականության, գույքային իրավունքների, խոսքի ազատության իրավունքի և կրոնի բնագավառներում: Դրանք նաև սահմանում են վարքագծի կանոններ այնպիսի պետական մարմինների համար, ինչպիսիք են ոստիկանությունը և դատարանները: Այնուամենայնիվ, մարդու իրավունքները ուղղված են ոչ միայն քաղաքացիների բարօրության ապահովմանը, և այդ սկզբունքների իրականացումը հիմնականում կառավարության պատշաճ գործելակերպի խնդիր չէ: Այս սկզբունքների պահպանումը պետք է լինի ցանկացած պրագմատիկ և կրթված պետական մարմնի և պաշտոնատար անձի սեփական շահերից բխող գործունեություն:

Երբեմն ասում են, որ այդ սկզբունքները պահպանելու միջոցով պետության և ժողովրդի միջև կնքվում է «պայմանագիր»: Մարդիկ գիտեն, թե ինչ կարող են ակնկալել կառավարությունից, և քանի դեռ կառավարությունը հարգում է այդ սկզբունքները, մարդիկ վստահությամբ կվերաբերվեն կառավարությանը: Պետական կառավարման մարմինների նկատմամբ վստահություն տաժող ժողովուրդը հակված է հարգելու օրենքները և կանոնակարգերը: Պետական մարմինների նկատմամբ վստահության շնորհիվ այդ մարմինների որոշումների պատշաճ կիրառման հավանականությունն ավելի մեծ է: Արդյունքում, մարդու իրավունքներ հարգող հասարակությունը հասնում է կայունության և կանխատեսելիության: Քաղաքացիները կարող են վստահ լինել, որ իշխանությունները նմանատիպ իրավիճակներում իրավական նորմերը նույն կերպ կկիրառեն բոլորի նկատմամբ: Կայունության և կանխատեսելիության այս զգացումը տնտեսական բարեկեցության և ժողովրդավարության նախադրյալ է հանդիսանում: Օրենքների և կանոնակարգերի գերակայության նկատմամբ վստահություն տաժող անձը նաև պատրաստ է ներդրում կատարել հասարակության բարօրության համար և ավելացնել իր մասնավոր ունեցվածքը: Եթե անձը վստահ է, որ օրենսդրությունը բոլորի նկատմամբ հավասարապես է կիրառվում, քաղաքական գործիչներին կվստահի դեկավարելու լիազորությունը՝ համոզված լինելով, որ նրանք իրենց լիազորությունները կիրականացնեն պատասխանատու ձևով:

Մարդու իրավունքների հարգումը հարատև տնտեսական բարեկեցության և ժողովրդավարական զարգացման նախադրյալ է:

- Մարդու իրավունքները ներկայացնում են համընդհանուր ձգտում՝ գտնելու բոլորի հավասար արժեքը փոխադարձաբար հարգելու ընդհանուր համակարգ:*
- Մարդու իրավունքները նպատակ ունեն գտնելու արդարության բացարձակ սկզբունքներ և կանխելու զանգվածային իրավախախտումները:*
- Վավերացնող պետությունը հանձն է առել կառուցել բոլոր քաղաքացիների նկատմամբ արդար և հավասար վերաբերմունքի ու հարգանքի վրա հիմնված հասարակություն՝ մարդու իրավունքների համաձայնագրերում ամրագրված սկզբունքների համաձայն:*
- Մարդու իրավունքների իրականացման համար պահանջվում է հասարակության բոլոր անդամների ակտիվ ներգրավումը:*
- Մարդու իրավունքների երաշխավորումը ձևավորում է կայունություն և կանխատեսելիություն:*
- Մարդու իրավունքների հարգումը հասարակության մեջ ձևավորում է փոխադարձ վստահություն:*
- Մարդու իրավունքների իրականացումը տնտեսական հարատև զարգացման նախադրյալ է:*

Ներդրողներն առնվազն կասկածով կվերաբերվեն գումար ներդնելուն այնպիսի երկրում, որտեղ չեն կարող վստահ լինել, որ պայմանագրի խախտումները կվերացվեն և իրավախախտ անձինք հավուր պատշաճի պատասխանատվության կենթարկվեն:

Իրավունքի գերակայությունը նշանակում է, որ բոլորը հավասար են օրենքի առջև և բոլորը ենթարկվում են օրենքին: «Երկիրը պետք է միշտ օրենքի հիման վրա կառուցված լինի»:

Մարդու իրավունքների պաշտպանի տիպի հաստատությունները հիմնադրվում են որպես թվարկված երեք տարրերի իրագործման մեխանիզմներ: Այդ հաստատություններին վերապահվող քննություն իրականացնելու լայն լիազորությունները պետք է որ ներագդեն կառավարության վրա և ապահովեն վերջինիս գործունեության թափանցիկությունը, հաշվետու և մասնակցային բնույթը: Այնուհանդերձ, նշված չափանիշների իրագործումը ապահովելու պարտականությունը վերջին հաշվով կրում են պետական կառավարման մարմինները: Լավ կառավարման սկզբունքները կարելի է համառոտ բնութագրել **ճիշտ, արդար և անկողմնակալ** բառերով: Այս սկզբունքները գործնական առումով իրենցից ներկայացնում են ուղենիշներ պետական մարմինների համար՝ պատշաճ վարքագիծ դրսևորելու վերաբերյալ, ինչպես նաև հուշում են սովորական քաղաքացիներին, թե ինչ կարելի է ակնկալել պետական մարմիններից և ինչպիսի վարքագիծ դրսևորելու դեպքում իրենք կարող են բողոքներ ներկայացնել Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության տիպի հաստատություններին: Այլ կերպ ասած, դրանք պետական մարմիններին հուշում են, թե վերջիններս ինչպիսի վարքագիծ պետք է դրսևորեն, որպեսզի խուսափեն Պաշտպանի քննադատությունից:

Հետևելով ճիշտ, արդար և անկողմնակալ կերպով վարվելու սկզբունքներին՝ պետական մարմինները կկարողանան հավասարապես վերաբերվել բոլոր քաղաքացիներին և բարձրացնել պետական կառավարման արդյունավետությունը:

Ճիշտ գործելակերպ

Ճիշտ գործելակերպը նախ և առաջ նշանակում է գործելակերպ՝ օրենքի և տվյալ պետական մարմնի գործունեությունը կանոնակարգող այլ իրավական նորմերի հիման վրա: Պրակտիկայում դա նշանակում է, որ յուրաքանչյուր հանրային ծառայող պետք է աշխատի դրսևորել *վարչական օրինաչափ վարքագիծ* և հետևել իր հաստատությունում ընդունված վարչական պրակտիկային: Եթե այդ պրակտիկան հակասում է օրենքին կամ մարդու իրավունքներին, ապա հանրային ծառայողը պարտավոր է այդ մասին հայտնել իր վերադասին կամ Օմբուդսմանին:

Ճիշտ գործելակերպ նշանակում է նաև *ողջամտություն* ցանկացած իրավիճակում: Սա սկզբունքային խնդիր է՝ նման վերաբերմունքը կարող է նաև նպաստել կառույցի նկատմամբ վստահության ամրապնդմանը: Հանրային ծառայողը պետք է միշտ մատչելի ձևով բացատրի անձին, թե իր կառույցն ինչպիսի գործողություններ է ձեռնարկել նրա հարցի կապակցությամբ՝ հաշվի առնելով բարդ նորմեր և կանոնակարգեր հասկանալու վերջինիս կարողությունը, ինչպես նաև նրա տարիքը և, համապատասխան դեպքերում, հաշմանդամության գործոնը, զգացմունքները, անձնական կյանքի գաղտնիության և կենսական հարմարությունների նկատառումները:

Հասարակության հետ հարաբերություններում *սպասարկող կողմնորոշում ունենալը, օգտակար, կոռեկտ, զգուշավոր և հասանելի լինելը* նույնպես սկզբունքային խնդիր է, որը կարող է նաև օգտակար լինել տվյալ պետական կառույցի համար: Փորձը ցույց է տվել, որ սպասարկող մոտեցում դրսևորելու շնորհիվ ընթացակարգերն ավելի հարթ և արդյունավետ են դառնում: Դա նշանակում է, որ հանրային ծառայողը պետք է քաղաքացուն տեղեկացնի վերջինիս հարցի հետ կապված բոլոր կարևոր մանրամասների մասին: Ոչ ճիշտ հասցեով դիմող քաղաքացուն պետք է ուղարկել ամենից ավելի համապատասխան և օգտակար իրավասու մարմնի մոտ: Հանրային ծառայողը պարտավոր է նաև պատշաճ կերպով պատասխանել իրեն ուղարկված նամակներին՝ պատասխանի մեջ օգտագործելով հասցեատիրոջ համար հասկանալի ձևակերպումներ: Վարչական բյուրոկրատիան սովորական մարդուն կարող է անանցանելի և անհասկանալի թվալ: Իհարկե, նման ընկալումը քաղաքացու մոտ բացասական կանխակալ վերաբերմունք է ձևավորում հանրային ծառայողների նկատմամբ: Նման վերաբերմունք փոխելն էապես կհեշտացնի հանրային ծառայողների աշխատանքը:

Պաշտպանը հաճախ բողոքներ է ստանում իրավական նորմերից դժգոհող անձանցից, որոնք նորմերը համարում են շփոթեցուցիչ, և հնարավոր է՝ սխալ են հասկանում դրանք: Բազմաթիվ բողոքների պատճառ է հանդիսանում այն հանրային ծառայողների կոպտությունը կամ ոչ ճկուն լինելը, ովքեր ղեկավար պաշտոններ են զբաղեցնում:

Ի լրումն վերը նշվածին, ճիշտ գործելակերպ նշանակում է, որ խնդիրները պետք է լուծվեն *ընդունելի ժամկետներում՝ առանց ուշացումների*: Դա նշանակում է փաստաթղթերի անհապաղ տրամադրում, որոշումների ժամանակին իրականացում,

պահանջվող տեղեկությունների արագ ծանուցում և այլն: Հնարավոր է, որ հանրային ծառայողը գերբեռնված է աշխատանքով և ռեսուրսների պակաս է զգում, սակայն նա պարտավոր է ապահովել քաղաքացու անհապաղ տեղեկացումը նրա խնդրի համար էական նշանակություն ունեցող նոր որոշումների ընդունման կամ հանգամանքների առաջացման մասին: Ինչ խոսք, անընդունելի է, երբ հանրային ծառայողը տվյալ խնդրով չի զբաղվում, քանի որ խնդրի լուծման մեջ անձնական շահ չունի:

Վարչական լռությունը գայրացնում և վիրավորում է տուժած անձին. հաճախ այն բողոքի հիմք է դառնում: Քաղաքացու հետ մշտական հաղորդակցությունը կրթորձրացնի վստահությունը տվյալ պետական մարմնի նկատմամբ և կնվազեցնի Օմբուդսմանին ներկայացվող բողոքների քվաքանակը:

Արդար գործելակերպ

Արդար գործելակերպ նշանակում է անհատների նկատմամբ ***համանման իրավիճակներում դրսևորել նույն մոտեցումը:*** Նրանց պետք է վերաբերվել նույն կերպ, և օրենքը պետք է համանման դեպքերում նույն կերպ մեկնաբանվի: Այսինքն՝ յուրաքանչյուր անհատ պետք է կարողանա ողջամտության սահմաններում կանխատեսել, թե իր խնդիրն ինչպիսի լուծում կստանա: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել նաև որոշակի տարբերությունների առկայությունը նմանատիպ գործերի միջև, քանի որ հակառակ դեպքում հնարավոր են կարծր և քարացած մոտեցումներ, որոնք անխուսափելիորեն կբերեն անհավասարության և անարդյունավետության:

Արդար գործելակերպ նշանակում է նաև, որ հանրային ծառայողները պետք է պատրաստ լինեն ըստ անհրաժեշտության ***վերանայելու կանոնները և փոխելու ընթացակարգերը:*** Այս կապակցությամբ, պետական մարմինները պետք է միշտ աշխատեն տեղեկացված լինել Օմբուդսմանի համապատասխան առաջարկությունների և զեկույցների մասին: Կոնկրետ գործի վերաբերյալ Օմբուդսմանի առաջարկությունները՝ թե ձևական, թե ոչ ձևական առումներով, պետք է դիտվեն որպես նախադեպեր և վարչական ընթացակարգերի փոփոխությունների վերաբերյալ պոտենցիալ առաջարկություններ: Դրա հետ միասին, պետական մարմինները կարող են նաև սեփական նախաձեռնությամբ ներքին ուսումնասիրություններ նախաձեռնել և քննարկել բացասական հետևանքներով որոշումներն ուժը կորցրած ճանաչելու հնարավորությունը:

Արդար գործելակերպ նշանակում է նաև, որ անձը պետք է տեղեկացվի բացասական որոշումը բողոքարկելու հնարավորությունների և, համապատասխան դեպքում, Պաշտպանին դիմելու հնարավորության մասին:

Մարդկանց պետք է համանման իրավիճակներում նույն կերպ վերաբերվել, անհրաժեշտության դեպքում վերանայել որոշումները և մատչելի ձևով պարզաբանել որոշումը կամ առանձին գործողությունը բողոքարկելու հնարավորությունները:

Անկողմնակալ գործելակերպ

Լինել անկողմնակալ նշանակում է բոլոր որոշումների հիմքում ապահովել հավասար մոտեցում՝ **զերծ որևէ կանխակալ կամ կողմնակալ վերաբերմունքից**: Պետք է խուսափել անձի մաշկի գույնով, սեռով, ամուսնական կարգավիճակով, ազգությամբ, մշակույթով, լեզվով կամ սեռական կողմնորոշմամբ պայմանավորված խտրականությունից կամ կողմնակալությունից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Որոշումների կայացման վրա չպետք է ազդի այն հանգամանքը, թե ով է համապատասխան անձը կամ ում է նա ճանաչում: Հայտնի է, որ դատարանների համար ամենակարևորը ոչ միայն նրանց անկողմնակալությունն է, այլև՝ անկողմնակալ ընկալվելը: Այս սկզբունքը, ինչ խոսք, կիրառելի է ցանկացած պետական մարմնի նկատմամբ: Խտրական վերաբերմունքի դրսևորումը ոչ միայն վիրավորական է իրավունքը խախտված անձի համար, այլ նաև կարող է ընդհանուր տարածայնությունների և անկայունության պատճառ դառնալ, որը վնասակար է ողջ հասարակության համար:

Ինչ խոսք, լինել անկողմնակալ նշանակում է նաև, որ կայացվող որոշումների վրա երբեք չպետք է ազդի **հանրային ծառայողի սեփական ֆինանսական կամ այլ բնույթի շահը**: Եթե հանրային ծառայողն **արտաքին անհարկի ճնշումների** է ենթարկվում, նա պարտավոր է այդ մասին զեկուցել իր վերադասին, ինչպես նաև կարող է դիմել Օմբուդսմանին:

Որոշումները չպետք է պայմանավորված լինեն կողմնակի հանգամանքներով կամ փաստերով: Խտրականության դրսևորումից անհրաժեշտ է խուսափել: Պետական մարմինը պետք է ոչ միայն լինի, այլև աշխատի ընկալվել որպես անկողմնակալ:

* * * * *

Անհատական բողոքների քննարկում

Աշխատանքի հիմնական մեթոդները

Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության տիպի կառույցների բնորոշ գծերից է աշխատանքի սեփական մեթոդներն ընտրելու ազատությունը: Ի տարբերություն դատարանների, Պաշտպանը չի սահմանափակվում կոնկրետ մեկ գործելաճով. նա կարող է տարբեր մոտեցումներ փորձել: Մարդու իրավունքների պաշտպանի առաջնային խնդիրն է ոչ թե իրավական բնույթի որոշումներ ընդունելը, այլ պետական կառավարման մարմինների՝ հիմնավորված բողոքի առարկա հանդիսացող գործողությունների կապակցությամբ հնարավոր լուծումներ փնտրելը և գտնելը, ինչպես նաև այդ լուծումների կիրառումն ապահովելը: Օմբուդսմանի հաստատությունը, ինչպիսին է Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը, պետք է ոչ թե պետական մարմինների գործառույթն իր վրա վերցնի կամ նրանց խնդիրներով զբաղվի, այլ ապահովի նրանց կողմից իրենց պարտականությունների արդար, հավուր պատշաճի և անկողմնակալ ձևով կատարումը՝ օրենքին համապատասխան: Դատարանը վճիռ է կայացնում իրավունքի համապատասխան նորմի հիման վրա, իսկ Օմբուդսմանի հաստատությունը, ինչպիսին է Մարդու իրավունքների պաշտպանը, փորձում է կոնկրետ գործի փաստացի հանգամանքներին համապատասխան լուծում գտնել: Ըստ էության, յուրաքանչյուր գործ քննարկվում է յուրովի, և քննության ընթացքը յուրաքանչյուր գործի դեպքում կարող է տարբեր լինել: Այսպիսով, Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է գալիս որպես «խնդիր լուծող»՝ ստեղծագործաբար մոտենալով լուծումներ որոնելու գործընթացին և կիրառելով այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են համոզելը և միջնորդելը, իսկ եթե դրանք արդյունք չեն տալիս՝ պաշտոնական քննադատության հրապարակումը: Այսպիսով, Օմբուդսմանը ձկուն է օրենքի շրջանակներում այնպիսի մեթոդների ընտրության հարցում, որոնք առավել հարմար են կոնկրետ գործի համար, սակայն միշտ պետք է խելամտորեն ձեռնպահ մնա այնպիսի լուծումներ առաջարկելուց, որոնք հնարավոր չէ իրագործել:

Պաշտպանը չի սահմանափակվում որոշակի ֆորմալ սկզբունքներով: Նա ազատորեն փորձում է գտնել օրենքով նախատեսված համապատասխան լուծումը:

Օմբուդսմանի լիազորությունների շրջանակն ավելի լայն է, քան դատարանինը: Նա պետք է պաշտպանի և խթանի մարդու իրավունքները, իրավունքի գերակայությունը և լավ կառավարումը, որը նշանակում է, որ նա պետք է գործի ոչ միայն արձագանքելով, այլ նաև՝ սեփական նախաձեռնությամբ: Անհրաժեշտ է, որպեսզի հաստատությունը նշված հասկացությունների պրակտիկ կիրառության հետ կապված համապատասխան փորձ ունենա և միշտ գործի օրենքի շրջանակներում: Բոլոր գործողությունները և որոշումները պետք է հիմնված լինեն մանրակրկիտ իրավական վերլուծության վրա: Համապատասխան մարմիններին կամ հանրային ծառայողներին արվող առաջարկությունները և վերջիններիս հաղորդման կամ ներկայացման եղանակը պետք է հնարամտորեն ընտրի ինքը՝ Պաշտպանը: Աշխատանքի այս մեթոդները էապես տարբերվում են պետական այնպիսի մարմինների աշխատանքի մեթոդներից, ինչպիսիք են դատարանները, դատախազները, պետական ատղիտորները:

Պաշտպանի կողմից ձեռնարկվող միջոցառումները հիմնված են մանրակրկիտ իրավական վերլուծության վրա և իրագործվում են առկա լավագույն լուծումների ուսումնասիրության միջոցով:

Ստորև ներկայացվում է դատարանի և Օմբուդսմանի հաստատության լիազորությունների համեմատական աղյուսակը: Այն կարող է օգտակար լինել այդ կառույցների միջև առկա տարբերությունները լիարժեք ընկալելու առումով:

Դատարան

Օմբուդսման

- Կայացնում է պարտադիր կատարման ենթակա որոշումներ:
- Պատասխանատու է միայն որոշման կայացման, սակայն ոչ՝ կատարման համար:
- Իր որոշումները կայացնելիս հենվում է օրենքի և նախադեպերի վրա և հաշվի չի առնում արդյունավետության կամ կատարման գործնական նկատառումները:
- Պարտավոր է ապահովել «արդար դատաքննության» բարձր դատավարական չափանիշների կատարումը, որի պատճառով ֆորմալ, երբեմն՝ կարծր, ծախսատար ու երկարատև է:
- Գործ ունի վիճող կողմերի հետ:
- Ըստ էության գործում է արձագանքելու սկզբունքով, պրոակտիվ մոտեցում է դրսևորում միայն առանձին որոշմամբ նախատեսվող դեպքերում:

- Ներկայացնում է առաջարկներ և առաջարկություններ, և ոչ թե պարտադիր կատարման ենթակա որոշումներ:
- Մոնիտորինգ է իրականացնում նաև առաջարկների և առաջարկությունների կատարման նկատմամբ:
- Իր առաջարկները և առաջարկությունները հիմնում է օրենքի վրա, սակայն հաշվի է առնում նաև այն, թե գործնականում ինչը կարող է արդյունավետորեն իրականացվել:
- Կարող է արագորեն և առանց ձևական ընթացակարգերի զբաղվել կոնկրետ գործերով:
- Գործ ունի պետական մարմինների և անհատների հետ:
- Ազատորեն ընտրում է ցանկացած միջոց՝ օրենքի և հաստատության լիազորությունների շրջանակներում:
- Աշխատում է ինչպես արձագանքելու, այնպես էլ պրոակտիվ եղանակներով, այդ կերպ փորձելով կանխարգելել իրավախախտումների կատարումը:

Ո՞վ կարող է բողոք ներկայացնել և ինչպե՞ս

Օմբուդսմանը, ինչպիսին է նաև Պաշտպանի հաստատությունը, հասանելի իրավական պաշտպանության միջոց է ընձեռում բոլոր քաղաքացիներին: Եթե քաղաքացին որևէ հանրային ծառայողի կամ պետական կամ համայնքային մարմնի գործողությունների հետ կապված առարկություններ ունի, նա կարող է դիմել Օմբուդսմանին: Նախընտրելի է, որպեսզի բողոքը լինի գրավոր և պարունակի գործի համար նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները: Այնուհանդերձ, քաղաքացիները կարող են հաստատությանը դիմել նաև հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով, անգամ հանդիպել իրավաբանի հետ, որը կարող է խորհուրդ տալ բողոք բերող անձին, թե ինչ միջոցներ նա կարող է ձեռնարկել: Իրավաբանական անձինք, ինչպիսիք են ընկերությունները, կազմակերպությունները և հիմնադրամները, որոշ դեպքերում

նույնպես կարող են բողոք ներկայացնել: Հիմնական նպատակն այն է, որ Պաշտպանը հասանելի լինի բոլորի համար և ի վիճակի լինի անհապաղ արձագանքել՝ ի տարբերություն դատարանների, որոնց ձևական դատավարական պահանջների պահպանումը թույլ չի տալիս գործել արագ և ոչ ֆորմալ կարգով:

Պաշտպանը պետք է հասանելի լինի յուրաքանչյուրի համար և ի վիճակի լինի արագորեն արձագանքել:

Օմբոդսմանին դիմում են քաղաքացիներ, որոնք հաճախ զայրացած են, քանի որ որոշակի վարչական խնդիրներ չեն կարողացել բարեհաջող կերպով լուծել: Բողոքներից շատերն անհիմն են կամ դուրս են հաստատության լիազորությունների շրջանակից: Մյուս կողմից, բողոքներից շատերը կարող էին կանխվել, եթե հանրային ծառայողը կամ համապատասխան պետական մարմինն ավելի բարյացակամ գտնվեին և քաղաքացուն հստակ ու հասկանալի կերպով բացատրեին իրավիճակը: Այնուհանդերձ, նման դեպքերում Պաշտպանը կարող է հստակեցնել գործը և խորհուրդ տալ բողոք բերող անձին այն մասին, թե որ մարմինը կարող է նրան օգտակար լինել, հաշվի առնելով նաև, որ հաստատությունն իր բնույթով իրավաբանական օգնություն մատուցող ավանդական կենտրոն չէ:

Պաշտպանին ներկայացվող բողոքներից շատերն ընդունելի չեն, սակայն Պաշտպանը կարող է աջակցել դիմումատուին՝ պարզաբանելով իրավիճակը կամ տեղեկացնելով նրան, թե որ մարմնին ավելի ճիշտ կլինեք դիմել տվյալ դեպքում:

Պաշտպանի աշխատանքի առանցքային խնդիր է բոլոր քաղաքացիների համար հասանելի լինելը և հաստատությանը դիմելու համար հնարավորինս շատ միջոցների ապահովումը: Քանի որ Պաշտպանը մշտապես գործում է միայն մայրաքաղաքում, հաստատությունը պետք է հասարակայնության հետ կապեր հաստատի և պահպանի՝ այցելելով համայնքներ և համապատասխան պետական մարմիններ: Շատ գործեր Պաշտպանին ուղարկվում են մասնավոր փաստաբանների կողմից, որոնք մարդկանց խորհուրդ են տալիս դիմել Պաշտպանի հաստատությանը: Մարդու իրավունքների խնդիրներով զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունները նույնպես կարող են օգտակար լինել, տեղեկացնելով անձանց՝ Պաշտպանին դիմելու հնարավորության մասին: Բացի այդ, նախընտրելի կլինի, եթե հանրային ծառայողները ևս քաղաքացիներին տեղեկացնեն Պաշտպանին բողոք ներկայացնելու հնարավորության մասին, եթե տեսնում են, որ քաղաքացին դժգոհ է համապատասխան հանրային ծառայողի կամ պետական մարմնի գործողություններից: Ըստ էության, դժգոհության դեպքում համապատասխան մարմնին դիմելու վերաբերյալ քաղաքացիներին տեղեկացնելու կարգը պետք է հանդիսանա ստանդարտ ընթացակարգի մի մասը: Ավելին, հանրային ծառայողներն իրենք կարող են որոշ դեպքերում շահագրգռված լինել, որպեսզի որոշակի հարցեր ներկայացվեն Պաշտպանի քննարկմանը: Դա հնարավոր խախտումը շտկելու, իրավական ուսումնասիրություն նախաձեռնելու կամ ապագայում նմանատիպ բողոքները կանխելու արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ:

Պաշտպանը ձգտում է հասանելի լինել բոլոր քաղաքացիների համար և պետք է ակնկալի նաև, որ հաստատության գոյության և գործառույթների մասին քաղաքացիները կտեղեկացվեն հասարակական տարբեր դերակատարների, այդ թվում՝ փաստաբանների և ոչ կառավարական կազմակերպությունների, ինչպես նաև բողոքի նշանակետ հանդիսացող հանրային ծառայողների կամ պետական մարմինների կողմից:

Բողոքը կարող է անանուն ներկայացվել, սակայն այդ դեպքում Պաշտպանը պարտավոր չէ բողոքը ընդունել քննարկման: Պաշտպանը կարող է նաև բողոքը քննարկելիս չբացահայտել բողոքը ներկայացնողի ինքնությունը: Այնուհանդերձ, անանունությունը, որպես կանոն, բարդացնում է բողոքի քննարկման ընթացքը, քանի որ Պաշտպանը նման դեպքերում, օրինակ, չի կարող լրացուցիչ տեղեկություններ ստանալ բողոքի կապակցությամբ կամ «*Audiatur et altera pars*»²⁶ կանոնի հիման վրա հաշվի առնել այն փաստերը, որոնք կարող են բացահայտել բողոք ներկայացնողի ինքնությունը: Հետևաբար, բողոք բերող անձին ընդհանուր առմամբ խորհուրդ է տրվում չներկայացնել անանուն բողոքներ:

Բողոքները կարող են անանուն կարգով ներկայացվել, սակայն նման գործերի արդյունավետ քննությունը, որպես կանոն, ավելի բարդ է, և Պաշտպանը պարտավոր չէ նման բողոքներն ընդունել քննարկման:

Նախընտրելի է, որպեսզի բողոքը ներկայացվի գրավոր ձևով՝ շարադրելով բոլոր էական փաստական հանգամանքները, որը թույլ կտա նվազեցնել գործը ոչ ճիշտ ուղղությամբ տանելու հավանականությունը: Այնուհանդերձ, եթե անհրաժեշտ լինի, գործով զբաղվող իրավաբանը կարող է բողոքի հետ կապված բոլոր տեղեկությունները գրի առնել հեռախոսային խոսակցության կամ դիմումատուի՝ գրասենյակ կատարած այցի ընթացքում: Տվյալ գործի հետ կապված հետագա բոլոր գործողությունները կարող են, ըստ անհրաժեշտության, իրականացվել գրավոր, սակայն կարող են նաև մասամբ կամ ամբողջությամբ կատարվել բանավոր կարգով, օրինակ, հեռախոսային խոսակցությունների միջոցով: Գործն իր բնույթով կարող է լինել այնպիսին, որ պահանջվի Պաշտպանի հրատապ միջամտությունը, և բողոք գրելով պայմանավորված ուշացումը կարող է ծանր հետևանքներ ունենալ: Այդպիսի իրավիճակ հնարավոր է, եթե տեղի է ունենում կամ կարող է տեղի ունենալ մարդու իրավունքների կոպիտ ոտնահարում, օրինակ, ապօրինի կալանք կամ անձի հանձնում մեկ այլ պետության: Պաշտպանը կարող է գործերը քննել նաև *ի պաշտոնե՝ սեփական նախաձեռնությամբ*, այսինքն, առանց կոնկրետ բողոք ստանալու: Նման գործերը լրացուցիչ կքննարկվեն ստորև:

Նախընտրելի է, որպեսզի Պաշտպանին տրվող բողոքը ներկայացվի գրավոր՝ նշելով բոլոր կարևոր փաստական հանգամանքները, սակայն հնարավոր է, որ անհրաժեշտության դեպքում բողոքը ներկայացվի նաև հեռախոսով կամ ոչ ֆորմալ ձևով՝ գրասենյակ կատարած այցի ընթացքում:

Բողոքի ընդունելիությունը

Երբ բողոքը ներկայացվում է Օմբուդսմանին, այն պետք է ուսումնասիրվի՝ պարզելու համար նրա ընդունելի կամ ոչ ընդունելի լինելը: Բոլոր այն բողոքները, որոնք անհիմն են կամ ակնհայտորեն չհիմնավորված, համարվում են ոչ ընդունելի: Հնարավոր է, որ բողոք բերած անձը սխալ է հասկացել համապատասխան օրենքը կամ խնդիրը, կամ տեղյակ չէ բողոքի ընդունելիության համար սահմանված իրավական պահանջներին:

²⁶ «ä»i ù ĸ Èè»É Ý³ .. Ûlláðè Í áÓÛÇÝ (Ñ³ Û»Û³ i . è»Ý»Í³ , Ø»¹»³, Ñ. 199):

Հնարավոր են նաև բողոքներ, որոնք ուղղված են այնպիսի մարմինների դեմ, որոնք Պաշտպանի իրավասության շրջանակից դուրս են: Բնականաբար, Պաշտպանը չի կարող մոնիտորինգ իրականացնել այնպիսի կառույցի նկատմամբ, որը Հայաստանի Հանրապետության իրավասության ներքո չի գտնվում: Հետևաբար, Պաշտպանը լիազորված չէ մոնիտորինգ իրականացնել դիվանագիտական առաքելությունների՝ դեսպանությունների, կամ միջազգային կազմակերպությունների նկատմամբ: Եթե հաստատությունը նման բողոք է ստանում, այն կարող է անմիջապես մերժվել: Այնուհանդերձ, որոշ դեպքերում Պաշտպանը կարող է տեղեկացնել տվյալ առաքելությանը կամ կազմակերպությանը բողոքի մասին և, երբեմն էլ, փորձել կողմերի միջև որոշակի երկխոսություն ձևավորել: Նման դեպքերում, սակայն, ցանկացած տեսակի հրապարակային քննադատությունը կամ պաշտոնական առաջարկությունը անպատեհ կլինի:

Պաշտպանի իրավասությունը չի տարածվում նաև ոչ կառավարական կազմակերպությունների և մասնավոր ընկերությունների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց գործողությունների հետևանքով կատարված իրավախախտումները կարող են վերագրվել պետական համապատասխան մարմինների ոչ պատշաճ վերահսկողությանը:

Բացի այդ, Պաշտպանը պարտավոր չէ քննարկել այն բողոքները, որոնց ներկայացման պահին արդեն լրացել է մեկ տարին «... այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման մասին»,²⁷ սակայն կարող է առանձին դեպքերում դրանք քննարկելու մասին որոշում կայացնել:

Որպես կանոն, Օմբուդսմանն իրավասու չէ միջամտելու դատարանի կողմից արդարադատության գործառույթի իրականացմանը: Այնուհանդերձ, նա կարող է մոնիտորինգ իրականացնել դատական համակարգի գործադիր և վարչական գործառույթների իրականացման նկատմամբ և քննադատել դատարաններին թյուրկառավարման դեպքերում: Նման դեպք կարող է լինել, օրինակ, դատական նիստի նշանակման ուշացումը, վեճի կողմին փաստաթղթեր կամ տեղեկություններ չտրամադրելը, նախապատրաստական աշխատանքների ոչ պատշաճ կազմակերպումը կամ որոշումների չկայացումը: Բնականաբար, որոշ դեպքերում դատարանների անկախության և Օմբուդսմանի՝ գործեր քննելու լիազորության իրականացման միջև սահմանագիծ անցկացնելը կարող է տարակարծության տեղիք տալ:

Բողոքը կարող է անընդունելի ճանաչվել, եթե այն.

- անհիմն է, մակերեսային կամ անանուն,***
- վերաբերում է օտարերկրյա պետության դիվանագիտական առաքելության կամ միջազգային կազմակերպության գործողություններին,***
- վերաբերում է ոչ կառավարական կազմակերպության կամ մասնավոր ընկերության գործողություններին,***
- բողոքը ներկայացնելիս անցել է ավելի քան մեկ տարի այն պահից, երբ դիմումատուն իմացել է կամ պետք է իմացած լիներ տվյալ խախտման մասին,***
- վերաբերում է դատարանի կողմից արդարադատության իրականացման գործառույթին :***

²⁷ | Ø³ ñ¹ áó çñ³ í áóÿüÝ»ñÇ á³ Ëí á³ ÝÇ Û³ ëÇÝŞ ÐÐ úñ»ÿüÇ 9-ñ¹ Ñá¹ í³ í :

Հետագա ընթացքը

Որոշ դեպքերում առաջին հայացքից դժվար է գնահատել, թե արդյոք բողոքը պետք է ընդունելի համարել, թե ոչ: Բնականաբար, բողոքը ներկայացվում է դիմումատուի դիրքերից և, որպես կանոն, չի պարունակում գործի համար կարևոր բոլոր փաստերի լիարժեք նկարագրությունը: Հետևաբար, բողոքը կարող է լրացուցիչ, որոշ դեպքերում՝ բավական մանրակրկիտ, ուսումնասիրությունների ենթարկվել՝ նախքան բողոքն անընդունելի ճանաչելը: Օմբուդսմանի կողմից բողոքների քննարկումը բնութագրվում է բաց գործելակերպով և հաղորդակցման որոշակի ոճով: Ենթադրվում է, որ խնդրին առնչվող հանրային ծառայողները և մարմինները բաց և ազնիվ կերպով պետք է համագործակցեն Օմբուդսմանի հետ: Բնական է, սակայն, որ նա պետք է նկատի ունենա, որ դա ոչ միշտ է այդպես: Բողոքների քննարկման ընթացքը սխեմատիկորեն ներկայացված է հավելված 5-ում:

Գործերի օրինակներ Խնդրի լուծումը նախնական շփման ընթացքում

Բողոքը ստանալուց հետո տվյալ գործով զբաղվող իրավաբանը նախաձեռնում է ընդհանուր բնույթի ուսումնասիրություն: Որպես կանոն, Օմբուդսմանը նախ և առաջ, քննության տվյալ փուլին հատուկ իրավական ուսումնասիրությունից հետո, կապ է հաստատում բողոքի խնդրո առարկա պետական մարմնի կամ ծառայողի հետ և ոչ պաշտոնապես նրան տեղեկացնում է գործի մասին՝ խնդրելով տրամադրել ընդհանուր տեղեկություններ: Բազմաթիվ գործեր լուծվում են հենց այս փուլում: Օմբուդսմանին ներկայացվող բողոքների մի զգալի մասը պայմանավորված է աննշան թերացումներով, որոնք թույլ են տրվել հանրային ծառայողի կողմից առանց դիտավորության և պայմանավորված են նրա անփութությամբ, անիրազեկությամբ կամ պարզապես սխալով: Ստորև ներկայացված Ա, Բ և Գ գործերի դեպքում, օրինակ, Օմբուդսմանից պահանջվել է ընդամենը մեկ հեռախոսազանգ, գործի նախապատմության մասին բավարար տեղեկություններ ստանալու և խնդիրը լուծելու համար:²⁸

Գործ Ա

2003թ. Ա.Գ.-ն դիմել է Կադաստրին՝ իր հոր անշարժ գույքի վերաբերյալ 1946թ. փաստաթղթի կրկնօրինակը իրեն տրամադրելու խնդրանքով: Կադաստրին մեկ տարուց ավելի ապարդյուն հիշեցումներ ուղարկելուց հետո Ա.Գ.-ն բողոք է ներկայացրել Պաշտպանին: Կադաստրը պնդել է, թե գրանցամատյանը տեղափոխվել է մեկ այլ մարմին, և որ կադաստրն այլևս պարտավոր չէ այդ ժամանակահատվածի վերաբերյալ փաստաթղթեր տրամադրել: Գործով զբաղվող իրավաբանը Ա.Գ.-ին տեղեկացրել է, թե նա ում պետք է դիմի: Շուտով, Ա.Գ.-ն ստացել է իրեն անհրաժեշտ փաստաթղթի կրկնօրինակը: Բացի այդ, Պաշտպանն ընդունել է որոշում, որով կադաստրը քննադատվել է իր հաճախորդներին, այդ թվում՝ Ա.Գ.-ին նոր կարգի մասին չտեղեկացնելու համար:

²⁸ ի »սեւի սօՍ օ: ի 3. անի ր 3 ի մաբան ան 3 ի ի Շ ի սնչԿ 3 ի Կ»նԿ Շն 3 ի 3 Կ. անի »նՇ 3 1/2 ի Ս»ԻԿ 3 մ 3 ԿսօՒՍսօԿԿ»ն »Կ, անսԿս Թ 3 Ս 3 եւ ի 3 ԿՇ Թ 3 Կն 3 ան ի սօՒՍ 3 Կ »ն 3 ի 3 Կ Ս 3 ոՍՇԿԿ»նՇ, Թ 3 ն 1 սօ Շն 3 ի սօԿսԿ»նՇ ան 3 Եւ ի ան 3 ԿՇ Ն» ի ան 3 շ 3 եԿսօՒՍսօԿ անսԿԿ»Կ, 3 Սե Կ»ն ի 3 Ս 3 օ ի սօՍ »Կ 3 Սե ի »Օ 1/2 սօ ի սօեանսԿ 3 եՇնսօՒՍ 3 Կ Կան 3 ի 3 ի ան ի:

Գործ Բ

2003թ. աշնանը Բ.Կ.-ն դիմել է Առողջապահության նախարարությանը՝ պահանջելով վերանայել հաշմանդամության խմբի վերաբերյալ որոշումը: 2005թ. տարեսկզբին Բ.Կ.-ն բողոք է ներկայացրել Պաշտպանին այն մասին, որ դեռ որևէ պատասխան չի ստացել նախարարությունից: Գործով զբաղվող իրավաբանը կապվել է նախարարության հետ, և համապատասխան աշխատակիցը հայտնել է, որ անմիջապես կզբաղվի այդ հարցով: Կարճ ժամանակ անց հանրային ծառայողը Պաշտպանին տեղեկացրել է, որ կարծես թե կորցրել են տվյալ գործը, սակայն այն կվերականգնեն: Երկու շաբաթ անց Բ.Կ.-ն Պաշտպանին տեղեկացրել է, որ ստացել է դրական որոշում:

Գործ Գ

Աշխատանքային տեսչությունը Գ.Ս.-ին չի տրամադրել ենթադրյալ խախտումների կապակցությամբ նրա աշխատավայրում անցկացված ստուգման արձանագրությունը: Գ.Ս.-ն բողոք է ներկայացրել Պաշտպանին: Գործով զբաղվող իրավաբանի հետ խոսելուց հետո Աշխատանքային տեսչությունն անմիջապես Գ.Ս.-ին է ուղարկել ստուգման արձանագրության կրկնօրինակը:

Նշված երեք դեպքերում բողոքի քննարկումն ավարտվել է պատասխանատու հանրային ծառայողների հետ առաջին շփումից հետո: Այս գործերի օրինակները բավական լավ ցույց են տալիս, թե ինչպիսին է բողոքների քննության ստանդարտ ընթացակարգը: Դրանցից ոչ մեկը չէր վերաբերում լուրջ իրավական բնույթի հիմնախնդրի, և գործով զբաղվող իրավաբանի և հանրային ծառայողի խոսակցությունը բավարար է եղել բոլոր անհրաժեշտ փաստերը պարզելու և խնդրի լուծմանը հասնելու համար: Պետական ծառայողն ակնհայտաբար շահագրգռված է եղել խնդրի արագ և պատշաճ լուծում գտնելու հեռանկարով, և ոչ նա, ոչ Պաշտպանը հակված չեն եղել մտնելու երկարատև վեճի մեջ:

Եթե Ա գործի կապակցությամբ կադաստրում աշխատող հանրային ծառայողն ավելի պատրաստակամ լիներ իրեն դիմող Ա.Գ.-ի նկատմամբ և վերջինիս տեղեկացներ նոր կարգի մասին, գործը, թերևս, երբեք չէր վերաճի բողոքի: Պետական ծառայողները հաճախ գտնում են, որ իրենց պարտականությունները սահմանափակվում են հստակ շրջանակներով, և իրենց պարտականություններից ուղղակիորեն չբխող գործողություններ չեն կատարում: Դա էլ տեղի էր ունեցել Ա գործում, և համապատասխան պետական մարմինը հավուր պատշաճի քննադատվել է:

Պետական մարմնին դիմող անձի համար դժվար է այդ մարմնի աշխատակարգի մասին լիարժեք պատկերացում կազմելը: Բացի այդ, կարևոր է, որպեսզի հանրային

ծառայողները միշտ փորձեն իրավիճակին նայել շարքային քաղաքացու դիրքերից: Եթե անձը դիմել է ոչ այն մարմնին, ապա հանրային ծառայողից ակնկալվում է, որ նա քաղաքացուն տեղեկացնի, թե ուր պետք է դիմել, այլ ոչ միայն ասել, որ նա սխալ հասցեով է դիմում («մենք դրանով չենք զբաղվում»), կամ նրան ուղարկել այնպիսի մարմնին, որը պաշտոնապես կարող է զբաղվել տվյալ գործով, սակայն իրականում ոչինչ չի ձեռնարկում նման դեպքերում: Քաղաքացիները չպետք է մոլորվեն բյուրոկրատիայի հորձանուտում:

Չնայած նրան, որ Ա գործը բավական արագ է լուծվել, Պաշտպանը որոշել է ներկայացնել պաշտոնական առաջարկ, որով կադաստրին խորհուրդ է տրվել քաղաքացիներին տեղեկացնել նոր աշխատակարգի մասին: Այդպիսի առաջարկությունները կանխարգելիչ նպատակ են հետապնդում և փորձում են ապագայում կանխել նման դեպքերը: Ենթադրվում է, որ այս տիպի առաջարկություններն ուղարկվում են բոլոր շահագրգիռ աշխատակիցներին: Բացի այդ, նման առաջարկությունները հրապարակվում են Պաշտպանի ամենամյա զեկույցում, որպեսզի ողջ երկրում դրանք դիտարկվեն և կիրառվեն: Պաշտպանը կարող է որոշ ժամանակ անց հետամուտ լինեն նման առաջարկություններին՝ համոզվելու համար, որ համապատասխան մարմինն իսկապես կատարել է առաջարկությունը:

Գ գործի դեպքում, ինչ խոսք, աշխատանքային տեսչությունն անօրինական որոշում էր կայացրել: Հետևաբար տեսչությունը գտավ, որ անիմաստ է վիճել տվյալ գործով զբաղվող իրավաբանի հետ, փոխարենը անմիջապես դիմումատուին տրամադրելով արձանագրության կրկնօրինակը: Իմանալով, որ որոշումն իրավական հիմքեր չունի, տեսուչին նպատակահարմար չէր լինի մերժել Պաշտպանի խնդրանքը: Եթե տեսուչը պնդեր, թե ստուգման արձանագրությունը գաղտնի է և չի կարող տրամադրվել դիմումատուին, Պաշտպանը պաշտոնական առաջարկություն կներկայացներ: Այնուհանդերձ, նման դեպքերում հազվադեպ է անհրաժեշտություն առաջանում ներկայացնելու պաշտոնական գրավոր առաջարկություն, չնայած որ սկզբունքը հաստատելը կամ անընդունելի գործելակերպի մասին հրապարակելը կարող է շատ օգտակար լինել:

Օմբուդսմանի և պետական մարմնի առաջին շփման ընթացքում պետք է պարզաբանվի բողոքի էությունը և փորձ արվի լուծում գտնել, եթե դա ողջամիտ է և ցանկալի: Շատ գործեր լուծվում են հենց առաջին շփման ընթացքում:

Օգտակար բողոքներ

Հաճախ առաջին շփման ընթացքում պարզ է դառնում, որ բողոքի ներկայացումը պայմանավորված է դիմումատուի կողմից օրենքի թյուրըմբռնմամբ կամ ոչ ճիշտ մեկնաբանությամբ: Բնականաբար, սկզբունքորեն Օմբուդսմանը հակակրանք չի տաժում պետական մարմինների նկատմամբ: Ընդհանուր առմամբ, հանրային ծառայողները գործում են օրենքի հիման վրա, լավ մտադրություններով: Հաշվի առնելով Օմբուդսմանի անկողմնակալ դիրքը, բողոքի քննությունը կարող է հանրային ծառայողին գերծ պահել անհիմն մեղադրանքից: Մյուս կողմից, հանրային ծառայողը հաճախ գերբեռնված է աշխատանքով և ոչ միշտ է ի վիճակի լինում խորամուխ լինելու

գործի բոլոր իրավաբանական մանրամասների մեջ: Բացի այդ, հնարավոր է, որ հանրային ծառայողները նույնքան իրավական գիտելիքներ չունենան, որքան որ Օմբուդսմանի հաստատության աշխատակիցները: Ուստի, Օմբուդսմանի կողմից բողոքի քննարկումը կարող է նաև օգնել պետական մարմիններին: Հնարավոր է, որ Օմբուդսմանը նույնիսկ հանրային ծառայողներից ստանա կոնկրետ գործերի վերաբերյալ իրավաբանական եզրակացություններ տալու մասին միջնորդություններ: Նման դեպքի բնորոշ օրինակ է Դ գործը:

Գործ Դ

Դ.Խ.-ն դիմել էր իր աշխատանքային գրքույկը և աշխատանքային գործունեության մասին այլ փաստաթղթեր ստանալու խնդրանքով, որոնք պահվում էին նրա բնակության վայրի թաղապետարանի քարտուղարությունում: Թաղապետարանը պնդում էր, թե պահանջած փաստաթղթերը ստանալու համար նրա կողմից պետք է կատարվի տուրքերի մասին թաղապետարանի որոշմամբ նախատեսված վճարում: Դ.Խ.-ն դիմեց Պաշտպանին: Գործով զբաղվող իրավաբանը դիմեց թաղապետարանին և պարզաբանեց, որ պահանջվող տուրքի սահմանումը հակասում է օրենքին: Թաղապետարանի քարտուղարը, որը ենթադրաբար քաջածանոթ չէր իրավական դաշտին, իրավաբանից խորհուրդ հարցրեց, թե ինչպես շտկել իրավիճակը, և նրան առաջարկվեց ավագանու հաջորդ նիստի ժամանակ ուժը կորցրած ճանաչել թաղապետարանի որոշման այդ կետը: Որոշ ժամանակ անց Պաշտպանը ստացավ խնդրո առարկա դրույթն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ որոշման կրկնօրինակը, ինչպես նաև նրան հայտնվեց, որ Դ.Խ.-ն անհապաղ ստացել էր իր պահանջած տեղեկությունները՝ առանց որևէ տուրք վճարելու:

Դ գործի դեպքում հանրային ծառայողը որոշեց հենվել գործով զբաղվող Պաշտպանի աշխատակազմի իրավաբանի փորձի վրա, որի արդյունքում ընդունվեց ավագանու վերը նշված որոշումը: Այս դեպքում Պաշտպանի կողմից պաշտոնական առաջարկություն ներկայացնելու անհրաժեշտություն չառաջացավ: Միայն խոսակցությունը բավական եղավ: Իրավաբանական եզրակացությունը, իհարկե, կարող էր ներկայացվել գրավոր տեսքով, եթե այն կարող էր օգտակար լինել ավագանու կողմից որոշման կայացման գործընթացում:

Հաճախ պետական մարմնի համար դժվար է լինում տեղեկացված լինել խնդրի բոլոր մանրամասներին: Պաշտպանը երբեմն ավելի շատ հնարավորություններ ունի իրականացնելու իրավիճակի իրավաբանական վերլուծություն: Գործով զբաղվող իրավաբանը կարող է տեղեկություններ ստանալ տարբեր պետական մարմիններից և աղբյուրներից: Դիմումատուն կարող է փաստացի սխալներ բացահայտել, որոնց մասին պետական մարմինը պետք է տեղեկացված լինի:

Ե գործն այնպիսի գործի օրինակ է, որի խնդիրը պետական մարմնին հայտնի չէր դառնա բողոքի բացակայության դեպքում:

Գործ Ե

Ե.Հ.-ի տան առջևով կառուցվել էր ճանապարհ, և այդ ժամանակից ի վեր նա խնդիրներ ուներ, քանի որ ջրի դրենաժային խողովակներից կեղտաջուր էր հոսում և հեղեղում նրա տարածքը: Թաղապետարանի աշխատակիցն անդրադարձել էր խնդրին, սակայն այն չէր լուծվել: Ե.Հ.-ն դիմել էր Պաշտպանին: Գործով զբաղվող իրավաբանի հետ խոսելուց հետո թաղապետարանը նախաձեռնել էր երկրորդ՝ ավելի մանրակրկիտ

Այս գործին լուծում գտնելու համար Պաշտպանը ստիպված էր նախաձեռնել և վարել երկխոսություն թաղապետարանի տարբեր վարչությունների և անչափահասների հարցերով հանձնաժողովի հետ: Ի վերջո, կողմերը հարցի վերաբերյալ եկան ընդհանուր հայտարարի: Այնուհետև գործով զբաղվող իրավաբանն ակտիվորեն մասնակցեց հանդիպումների կազմակերպչական մասի քննարկումներին: Այս խնդրի լուծմանը օգնելու ընթացքում Պաշտպանն անհրաժեշտ մասնակցություն ունեցավ և նպաստեց քննարկումների ծավալմանը: Այս դեպքում վեճ չկար օրենքով փաստացի նախատեսված իրավական նորմերի վերաբերյալ, սակայն գործադիրը չէր կարողանում որոշել, թե ով է պատասխանատու, և ինչ գործողություններ պետք է ձեռնարկվեն: Երբ գործադիր ճյուղի երկու կամ ավելի մարմինների միջև տարաձայնություն կա, Պաշտպանը կարող է հանդես գալ միջնորդի դերում, խնդրի լուծման նպատակով կլոր սեղանի շուրջ քննարկումներ կազմակերպել և երկխոսություն նախաձեռնել:

Գործ Է

Է.Մ.-ն, որը հոգեբուժարանում էր, հիվանդանոցի տնօրենին ապարդյուն բողոքներ էր ներկայացրել հիվանդանոցի բժիշկներից մեկի վերաբերյալ: Հարազատներից մեկի խորհրդով Է.Մ.-ն դիմել էր Պաշտպանին: Հիվանդանոցի բժիշկը կտրականապես հերքում էր վատ վերաբերմունքի փաստը: Գործով զբաղվող իրավաբանը կապվեց հիվանդանոցի տնօրենի հետ, որը պնդում էր, թե ինքը ոչինչ չի կարող անել: Գործով զբաղվող իրավաբանը դիմեց առողջապահության նախարարին: Պաշտպանի առաջարկով նախարարությունը ժամանակավոր հանձնաժողով ստեղծեց, որն այցելեց հիվանդանոց և եկավ այն եզրահանգման, որ և հիվանդը, և բժիշկը պետք է բուժում անցնեն և առանձնացվեն միմյանցից: Նախարարությունը կարգադրեց հիվանդանոցի տնօրենին ձեռնարկել համապատասխան միջոցառումներ և պարբերաբար նախարարությանը զեկուցել ձեռնարկվող բոլոր գործողությունների մասին:

Այս դեպքում Պաշտպանը չէր կարող մերժել ոչ դիմումատուի բողոքը, ոչ բժշկի պնդումները: Այնուհանդերձ, առաջարկելով նախարարությանը ձևավորել հանձնաժողով, Պաշտպանն ի վերջո ապահովեց խնդրի ուսումնասիրությունը և լուծումը:

Այս երկու դեպքերում ստանդարտ լուծում չկար: Կողմերին անհրաժեշտ եղավ երրորդ, անկողմնակալ կողմի միջամտությունը, որը կարող էր անհրաժեշտ կապող օղակի դեր կատարել և առաջարկել միջոցառումներ, որոնք կօգնեին կարգավորելու խնդիրը: Միջամտության արդյունավետությանը նպաստեցին համապատասխան կառույցների պաշտոնյաները, որոնք պատրաստ էին համագործակցել:

Պաշտպանը կարող է գործել որպես միջնորդ, օգնելով շահագրգիռ կողմերին լուծում գտնել առկա խնդիրներին: Շատ դեպքերում Պաշտպանը փորձում է բավական ոչ ֆորմալ մոտեցում դրսևորել իրավական բնույթի խնդիրներին ստեղծագործական լուծումներ գտնելու համար:

Վերադաս մարմիններին դիմելը

Ինչպես ներկայացվեց վերը բերված օրինակներում, երբեմն օգտակար կամ անգամ անհրաժեշտ է գործը հասցեագրել առավել բարձր ատյաններին, այսինքն՝ համապատասխան պետական մարմնի կամ պետական պաշտոնյայի վերադասին: Նման դեպքերում, սկզբում գրավոր պաշտոնական առաջարկ ներկայացնելը օգտակար կարող է լինել կամ չլինել: Այնուհանդերձ, շատ դեպքերում ոչ ֆորմալ մոտեցումը շարունակաբար կիրառելը կարող է բավարար լինել՝ ինչպես երևում է հետևյալ օրինակներից:

Գործ Ը

2002թ. ապրիլին Ը.Ս.-ն դիմել էր ֆինանսների նախարարություն, որպեսզի վերջինս ապահովի մաքսային ծառայության որոշման կատարումը, որի հիման վրա նրան պետք է փոխհատուցվեր ժամանակավորապես ներմուծված ապրանքների դիմաց մուտքագրված ավանդը: Որոշ ժամանակ անց, իր ավանդը չստանալով՝ կինը բողոք ներկայացրեց Պաշտպանին: Գործով զբաղվող իրավաբանի հետ խոսելուց հետո նախարարության համապատասխան աշխատակիցը պնդել էր, որ որոշումը չկատարելու պատճառը որոշ կանոնակարգերի փոփոխություններն են: Նախարարության աշխատակիցը պարզաբանել էր, թե ինչպես պետք է ավանդի գումարը փոխհատուցվի, սակայն Ը.Ս.-ն այդպես էլ չէր կարողանում ավանդը հետ ստանալ: Երբ գործով զբաղվող իրավաբանն անձամբ դիմեց նախարարին, ավանդն ի վերջո վերադարձվեց, և խնդրո առարկա որոշումն ի կատար ածվեց:

Բացի վերադաս ատյանին դիմելու օգտակարությունից, այս օրինակը ցույց է տալիս, որ Պաշտպանին ներկայացվող բողոքի քննարկումը մնում է ընթացքի մեջ ոչ միայն մինչև հարցի լուծումը գտնելը, այլ այնքան ժամանակ, քանի դեռ խնդիրը վերջնականապես չի լուծվում: Մինչև Պաշտպանի գրասենյակում գործի քննարկումն ավարտելը, այն մնում է ընթացքի մեջ, և ձեռնարկվում են հետևողական քայլեր:

Գործի քննությունը Պաշտպանի գրասենյակում չի ավարտվում այնքան ժամանակ, մինչև կասկած չի մնում, որ գտնված լուծումը հավուր պատշաճի ի կատար է ածվել: Եթե ընդունելի լուծում չի գտնվում, կամ գտնվող լուծումը պատշաճ կերպով ի կատար չի ածվում, Պաշտպանը գործը ներկայացնում է առավել բարձր ատյանի:

Գործ Թ

Թ.Բ.-ն դիմել էր Պաշտպանին, քանի որ դժգոհ էր առաջին ատյանի դատարանից, որը չէր ապահովել դատարանի նախորդ նիստի ընթացքում կայացված որոշման կատարումը: Երբ գործով զբաղվող իրավաբանը խոսեց դատավորի հետ, նշանակվեց որոշման կատարման ժամկետ: Ապա գործով զբաղվող իրավաբանը պահանջեց, որպեսզի ֆաքսով Պաշտպանին ուղարկվեն որոշման կատարման հետ առնչվող արձանագրությունները: Դատավորը խնդրեց իրավաբանին նույն պահանջը գրավոր տեսքով ներկայացնել: Գործով զբաղվող իրավաբանի հետ հեռախոսազրույցից հետո

Այս պարագայում, բնականաբար, Պաշտպանը հանդես էր եկել քննադատությամբ՝ ոչ միայն կառուցապատման թույլտվություններ տալու կամ չտալու, այլ նաև ողջ գործի ընթացքը դանդաղեցնելու և փաստաթղթերի տրամադրման հարցում խոչընդոտներ ստեղծելու վերաբերյալ:

Չնայած որ Պաշտպանի առաջարկությունները պարտադիր չեն այն իմաստով, որ դրանք չկատարելու դեպքում պատասխանատվության միջոցներ չկան, և պետական մարմինների կողմից դրանք ի կատար ածելու լծակներ չկան, դրանք իրականում շատ մեծ ազդեցություն են ունենում համապատասխան պետական մարմինների և պաշտոնատար անձանց վրա: Պատճառները բազմաթիվ են: Օրինակ, դժվար է չընդունել Պաշտպանի առաջարկները, եթե վերջինս ունի լուրջ փաստարկներ և հաստատակամություն: Ոչ մեկը չի ցանկանա հրապարակային քննադատության ենթարկվել՝ հաշվի առնելով Պաշտպանի ճանաչվածությունը և նրա վայելած հեղինակությունը: Պաշտպանի կողմից գործը առավել բարձր ատյանին ուղարկելը նույնպես ռիսկային է, քանզի այդ ատյանը կարող է և ընդունել Պաշտպանի տեսակետը:

Գործ Ժ-ի դեպքում խնդիրն ավարտվեց՝ հասնելով նախարարի և քաղաքապետի գրասեղաններին: Ուստի, զուտ իրավական խնդրից այն վերաճեց նաև քաղաքական բնույթի խնդրի: Քաղաքական պաշտոն զբաղեցնող պաշտոնյան կարող է բողոքը մերժելուց առաջ տարբեր մտահոգություններ ունենալ՝ ի տարբերություն վարչական պաշտոն զբաղեցնող պաշտոնյայի:

Պաշտպանի առաջարկությունները չընդունելը դժվար է և խնդրահարույց:

Հրատապ գործեր

Երբեմն Պաշտպանը կարող է հրատապ դեպքերում փորձել դիմել վերադաս բարձրագույն մարմիններին, որպեսզի անհապաղ միջամտություն կատարվի ընթացող կամ անմիջականորեն սպառնացող չարաշահումների առնչությամբ: Նման օրինակ է քննարկված ստորև:

Գործ Ի

Ի.Խ.-ն ծնվել էր Հյուսիսային Աֆրիկայում և օրինական ճանապարհով քաղաքացիություն ստացել՝ ամուսնանալով մի կնոջ հետ, ում նա հանդիպել էր մոտ տաս տարի առաջ, երբ նոր էր ժամանալ այստեղ: Նրանք երկրում միասին ապրել էին մինչև 2002թ., որից հետո ամուսնալուծվել էին: 2003թ. ներքին գործերի նախարարությունը հանկարծ որոշում էր ընդունել, որով Ի.Խ.-ի քաղաքացիությունն անվավեր էր ճանաչել այն հիմքով, թե այն նրան շնորհվել էր կեղծ որոշման հիման վրա: Ի.Խ.-ն դիմել էր նախարարությանը՝ պնդելով, որ քաղաքացիությունն անվավեր ճանաչելու որոշումն անհիմն է, և ներկայացրել հիմնավորող փաստաթղթեր: Երեք ամիս անց Ի.Խ.-ն ստացել էր որոշում, որով նա պարտավորեցվում էր երկու շաբաթվա ընթացքում լքել երկիրը և ասվում էր, որ չլքելու դեպքում նա հարկադիր վտարման կենթարկվի: Ի.Խ.-ն դիմել էր Պաշտպանին, որն անհապաղ կապվել էր անձամբ ներքին գործերի նախարարի հետ և վերջինիս զգուշացրել, որ քաղաքացիության խնդիրը լուծելուց առաջ անձին վտարելը կարող է Պաշտպանի կողմից սուր հրապարակային քննադատության տեղիք տալ: Նախարարն անմիջապես հետաձգել էր վտարումը և շուտով կայացրել որոշում, որով չեղյալ էր ճանաչվել վտարման մասին որոշումը և քաղաքացիությունը վերականգնվել էր:

Այս գործի օրինակը ցույց է տալիս, թե ինչպես արագորեն կարող է գործել Պաշտպանն արտակարգ իրավիճակներում: Երկարատև կալանքի, սպառնացող վտարման, ոստիկանության աշխատակիցների կողմից բռնությունների կամ խոշտանգումների իրականացման և նման այլ դեպքերում Պաշտպանի կողմից ձեռնարկվող հրատապ գործողությունները չեն կարող խոչընդոտվել անիմաստ երաշխիքների ապահովման պատճառով: Պաշտպանը կարող է արագորեն, պատշաճ կերպով վերլուծելով իրավական հետևանքները, ընդհանուր բնույթի նախազգուշացում անել և համապատասխան պետական մարմնին խորհուրդ տալ զգուշավորություն ցուցաբերել, պարզաբանելով, որ հակառակ դեպքում նա կենթարկվի սուր հրապարակային քննադատության: Նախազգուշացումը հաշվի չառնելը, որպես կանոն, կարող է ֆորմալ քննության և իրավական ընթացակարգերի տեղիք տալ, որը կարող է ծախսատար լինել համապատասխան անձանց և մարմինների համար:

Պաշտպանը կարող է արագորեն գործել և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան պետական մարմիններին զգուշացնել, որպեսզի նրանք ձեռնպահ մնան հնարավոր չարաշահումներից:

Դատարան դիմելը

Որպես կանոն, գործը հազվադեպ է քաղաքական մակարդակի հասնում: Ինչպես նշվեց, գործերի մեծ մասը լուծում է ստանում վաղ փուլում՝ ստանալով բոլոր կողմերին իրավական ու քաղաքական առումներով ընդունելի կարգավորում: Այնուհանդերձ, որոշ մարմիններ կամ պաշտոնյաներ կարող են հակադրվել և ինչ-ինչ պատճառներով հրաժարվել Օմբուդսմանի դիրքորոշումն ընդունելուց: Նման դեպքերում Օմբուդսմանը կարող է, օրինակ, դիմել դատարան, այդ թվում՝ սահմանադրական դատարան: Նման գործերը հաճախ մանրակրկիտ կերպով նախապատրաստվում են, քանի որ Օմբուդսմանը երկար ժամանակ հետևում է այդ գործերի ընթացքին: Պետական մարմնի կամ պաշտոնյայի համար ոչ այնքան խելացի քայլ կլիներ թույլ տալ, որ գործը վերաճի դատական քննության առարկայի:

Որպես կանոն, Օմբուդսմանը կարող է դիմել դատարան:

Հրապարակային քննադատություն

Պաշտպանը կարող է զանգվածային լրատվամիջոցներով հրապարակայնորեն քննադատել այն մարմինը կամ պաշտոնյային, որի կողմից թույլ են տրվում մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումներ, կամ երբ պետական մարմինը համառորեն հրաժարվում է ընդունել Պաշտպանի առաջարկությունը: Պաշտպանը և զանգվածային լրատվամիջոցներն իսկապես կարող են համարվել զուգահեռ գործող մարմիններ: Նրանք համանման գործառույթներ ունեն, քանզի պետք է անկախ մոնիտորինգ իրականացնեն պետական մարմինների գործունեության նկատմամբ՝ ձգտելով թափանցիկության և բացահայտելով անարդարությունը: Որոշակի իմաստով կարելի է համարել, որ Պաշտպանը և զանգվածային լրատվամիջոցները փոխարդարձաբար շահագրգռված են օժանդակել միմյանց: Պաշտպանի զեկույցները հետաքրքիր են զանգվածային լրատվամիջոցների համար: Մյուս կողմից, հրապարակայնությունը կարող է նոր թափ հաղորդել Պաշտպանի հնչեցրած քննադատությանը: Ընդհանուր առմամբ, ոչ ոք չի ցանկանում զանգվածային լրատվամիջոցներում ներկայացվել բացասական երանգներով և քննադատվել, քանզի նման քննադատությունը կարող է համապատասխան անձի համար վատ հետևանքներ ունենալ: Պաշտպանի հնչեցրած քննադատությունն ընդհանուր առմամբ համարվում է անկողմնակալ և խիստ բանիմաց, բարոյական մեծ հեղինակություն վայելող հաստատության հնչեցրած քննադատություն, որը, որպես կանոն, անցանկալի է քննադատության ենթարկվողի համար:

Պաշտպանը և զանգվածային լրատվամիջոցները մոնիտորինգի առումով համանման գործառույթներ ունեն:

Պաշտպանի հնչեցրած հրապարակային քննադատությունը, որպես կանոն, խիստ անցանկալի է քննադատության ենթարկվողի համար:

* * * * *

համապատասխան դեպքերում տվյալ հիմնարկում ազատագրկման մեջ պահվող անձանց հետ, և ուսումնասիրում տարածքը և փաստաթղթերը:

Ստուգվող հաստատությունը որևէ դեպքում և որևէ կերպ չի կարող խոչընդոտել ստուգմանը: Ստուգում անցկացնողները պետք է լիարժեքորեն կարողանան հանդիպել հիմնարկում գտնվող բոլոր անձանց հետ, ստանալ բոլոր փաստաթղթերը և նյութերը, մուտք գործել հիմնարկի բոլոր տարածքները, վերցնել կրկնօրինակներ և տեղում ստանալ պահանջվող հատուկ տեղեկությունները:

Ստուգման պատճառ կարող է լինել համապատասխան կառույցի կողմից ենթադրյալ թերությունների կամ չարաշահումների մասին ստացված տեղեկությունը: Իրականացվում են նաև պարբերական ստուգումներ անձանց հարկադրական պահման վայրերում, մանկատներում, հոգեբուժարաններում, ինչպես նաև ոստիկանական և ուժային կառույցներում, զինվորական հետախուզական ծառայությունում և գաղտնալսումներ իրականացնող մարմիններում՝ այնքանով, որքանով Օմբուդսմանի իրավասությունը տարածվում է այդ մարմինների վրա:

Օմբուդսմանը իրավասու է իր իրավասության շրջանակի մեջ մտնող ցանկացած մարմնում ստուգումներ անցկացնել: Ստուգվող մարմինը պարտավոր է նրան ամեն կերպ աջակցել ու օգնել և իրավունք չունի որևէ կերպ խոչընդոտել ստուգմանը:

Անցկացվելիք ստուգումների մասին կարող է նախապես հայտնվել, սակայն հնարավոր են նաև անակնկալ ստուգումներ: Վերջիններս կարող են իրականացվել, եթե բողոքներ են ստացվել, օրինակ, քրեակատարողական հիմնարկներում կատարվող բռնությունների վերաբերյալ, կամ եթե հիմքեր կան ենթադրելու, որ ստուգման մասին նախապես հայտարարելու դեպքում կփոփոխվեն կամ կոչնչացվեն փաստաթղթեր կամ որոշակի իրեր:

Այնուհանդերձ, սովորական ստուգումների մասին նախապես հայտարարվում է, թեկուզև այն պատճառով, որպեսզի համապատասխան մարմինը հնարավորություն ունենա իր աշխատանքները կազմակերպել և նախապատրաստվել ստուգմանը: Դա ներառում է աշխատակիցների և հիմնարկում պահվող անձանց տեղեկացումն այն մասին, որ բոլորին պետք է հնարավորություն ընձեռվի առանձին գրուցել Օմբուդսմանի կամ վերջինիս աշխատակիցների հետ:

Ստուգման մասին հայտարարելը հաճախ ստուգվող մարմնին դրդում է անդրադառնալ հին փաստաթղթերին՝ ժամկետանց գործողությունները կատարելու և նմանատիպ այլ խնդիրներ լուծելու նպատակով: Եթե ապօրինություններ տեղի չեն ունեցել, ապա այդպիսի գործողություններն ընդունելի են: Փաստորեն, նախապես հայտարարվող ստուգումներ անցկացնելու շարժառիթը հաճախ այն է, որ ստուգումը համապատասխան մարմնին դրդում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ:

Ստուգումների մասին կարող է նախապես հայտարարվել կամ ոչ: Հայտարարվելու դեպքում համապատասխան մարմինը նախապատրաստվում է ստուգմանը, մասնավորապես, իր աշխատակիցներին և հիմնարկում պահվող անձանց տեղեկացնում է ստուգում իրականացնողների հետ առանձին հանդիպում ունենալու հնարավորության մասին:

Որպես կանոն, ստուգման արդյունքում կազմվում է զեկույց կամ ստուգման արձանագրություն, որը պարունակում է թե մասնավոր և թե ընդհանուր բնույթի դիտարկումներ, այդ թվում՝ ստուգված մարմնի վերաբերյալ քննադատություն և առաջարկություններ, որն ուղարկվում է առաջին հերթին այդ մարմնին, երբեմն նաև՝ նրա վերադաս մարմնին, կամ, օրենսդրական միջոցառումների նպատակով, կառավարությանը կամ խորհրդարանին:

Ստուգվող մարմինը պարտավոր է լրջորեն վերաբերվել արտահայտված քննադատությանը, որոշակի ժամկետում իրագործել ներկայացված առաջարկությունները և ձեռնարկված միջոցառումների մասին զեկույց ներկայացնել Օմբուդսմանին, որը կարող է հետամուտ լինելու կարգով կրկնակի ստուգում անցկացնելու որոշում կայացնել: Չեկույցն Օմբուդսմանի կողմից տրվում է համապատասխան կառույցին և, որպես կանոն, լիարժեք տարբերակով, առանց խմբագրելու, տրվում է նաև իրավասու այլ մարմինների, այդ թվում՝ վերադաս մարմնին, ենթակա մարմիններին և համապատասխան այլ մարմինների:

Բնական է, որ հիմնարկի աշխատակիցների և այնտեղ պահվող անձանց հետ առանձնագրույցների ընթացքում կարող են պաշտոնապես անհատական բողոքներ ներկայացվել: Այդ բողոքները, որպես կանոն, քննարկվում են նույն կերպ, ինչպես պաշտոնապես ներկայացվող ցանկացած այլ անհատական բողոք:

Ստուգման արդյունքում, որպես կանոն, կազմվում է զեկույց կամ ստուգման արձանագրություն, որը պարունակում է քննադատություն և առաջարկություններ, որոնց՝ համապատասխան մարմինները պետք է արձագանքեն որոշակի ժամկետում: Օմբուդսմանը հետամուտ լինելու նպատակով ձեռնարկում է համապատասխան քայլեր:

Օրենսդրության վերլուծություն և օրենսդրական առաջարկներ

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության տիպի կառույցները գտնվում են նպաստավոր պայմաններում իրավական ակտերի վերանայման և դրանց գործնական կիրառության նկատմամբ մոնիտորինգ իրականացնելու առումով: Ոչ օրենքների նախագծերը մշակող մարմինները, ոչ էլ խորհրդարանը չեն կարող նախապես իմանալ այս կամ այն օրենքի կիրառման հնարավոր բոլոր հետևանքների մասին: Այս առումով, Օմբուդսմանը կարող է շատ կարևոր դեր խաղալ, քանի որ Օմբուդսմանի հաստատությունը հետևում է հասարակական հարաբերությունների այն մակարդակին, որի վրա փաստացի կիրառվում են օրենքները, և այդ կերպ նա կարող է նկատել թե իրավակիրառական, թե օրենսդրական թերությունները: Օմբուդսմանն առանձնակի ուշադրություն է դարձնում նաև այն հարցին, թե արդյոք օրենսդրությունը համահունչ է մարդու իրավունքների բնագավառում առկա բոլոր չափանիշներին և համապատասխան միջազգային իրավական նորմերին: Հետևաբար, Օմբուդսմանի կողմից իրականացվող օրենսդրության վերլուծությունը և օրենսդրական առաջարկները կարող են ծանրակշիռ և հիմնավորված լինել:

Պաշտպանը բարենպաստ դիրք է գրավում օրենսդրությունը մոնիտորինգի ենթարկելու և օրենսդրական առաջարկներ ներկայացնելու առումով: Պաշտպանն առանձնակի ուշադրությամբ է վերաբերվում մարդու իրավունքների խնդիրներին:

Չեկույցներ միջազգային մարմիններին և կազմակերպություններին

Օմբուդսմանի ժամանակակից հաստատությունները, ինչպիսին է Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը, կարող են իրենց հայեցողությամբ որոշել տեղեկություններ տրամադրել մարդու իրավունքներին վերաբերող և երկրի կողմից վավերացված կոնվենցիաների առնչությամբ երկրի ներսում առկա թերությունների մասին այն մարմնին, որը ստեղծվել է տվյալ կոնվենցիայի վերաբերյալ զեկույցներ ընդունելու և տվյալ կոնվենցիայի դրույթների կատարումը մոնիտորինգի ենթարկելու նպատակով: Այդ տեղեկությունները կարող են հանգեցնել միջազգային քննադատության, որի նկատմամբ կառավարությունը, որպես կանոն, խիստ զգոն է:

Պաշտպանը կարող է մարդու իրավունքների առնչությամբ երկրի ներսում առկա թերությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրել միջազգային մարմիններին և կազմակերպություններին, ինչպիսիք են Միավորված ազգերի կազմակերպությունը և Եվրոպայի խորհուրդը, ինչպես նաև նրանց հովանու ներքո գործող մարմինները:

Կանխարգելիչ միջոցառումներ³¹

Բացի տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումներից, ինչպիսիք են օրինակ՝ գործերի ուսումնասիրությունը, ստուգումները, օրենսդրության վերլուծությունը և զեկույցները միջազգային կազմակերպություններին, Օմբուդսմանի ժամանակակից հաստատությունները, ինչպիսին է Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը, կարող են իրականացնել տարատեսակ կանխարգելիչ միջոցառումներ: Մարդու իրավունքների պաշտպանությունը, լավ կառավարումը և իրավունքի գերակայությունը խրախուսելու նպատակով Օմբուդսմանն իրավասու է նախաձեռնել կամ իրականացնել իրազեկության բարձրացման քարոզարշավներ և կրթական միջոցառումներ:

Դա կարող է իրականացվել հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև պետական մարմինների հետ աշխատանքային հանդիպումների և քննարկումների միջոցով: Դա կարող է իրականացվել նաև զանգվածային լրատվամիջոցների կամ քարոզարշավների միջոցով, որոնք կազմակերպվում են համապատասխան վայրերում, շահագրգիռ այլ մարմինների՝ դպրոցների, համալսարանների, կրոնական կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների հետ միասին: Այն կարող է ներառել հեռուստագովազդներ, ցուցատախտակներ, թերթի

³¹ Մույն ձեռնարկի նպատակից ելնելով այս ենթավերնագիրը, ինչպես և այս գլխի մյուս ենթավերնագրերը շատ հակիրճ են ներկայացված (տես նախաբանը):

հայտարարություններ, հայեցակարգային փաստաթղթեր, շրջաբերականներ, պատի օրացույցներ, ելույթներ խորհրդարանում, մամլո ասուլիսներ, մամլո հաղորդագրություններ, հրապարակային հայտարարություններ, հրապարակային դասախոսություններ, բարձրաստիճան օտարերկրյա հյուրերի հրավերներ, տեսանյութեր իրավաբանական ԲՈՒՀ-երի և սովորական դպրոցների համար, սեմինարներ և խորհրդաժողովներ: Հնարավոր այլընտրանքային միջոցառումների այս լայն տեսականին ցույց է տալիս, որ ժամանակակից Օմբուդսմանի հաստատությունները, ինչպիսին է Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը, կարող են գործել շատ ճկուն:

Մարդու իրավունքների պաշտպանը կարող է տարատեսակ կանխարգելիչ հրապարակային միջոցառումներ իրականացնել մարդու իրավունքների, լավ կառավարման և իրավունքի գերակայության խթանման ուղղությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Օմբուդսմանի հաստատության ստեղծումը

1697 թվականին Շարլ XII-ը, որն այդ ժամանակ տասնհինգ տարեկան էր, դարձավ Շվեդիայի թագավոր: Երեք տարի անց՝ 1700թ. աշնանը, նա Նարվայում՝ այսօրվա Էստոնիայի և Ռուսաստանի սահմանին առասպելական հաղթանակ տարավ Պետրոս ցարի ռուսական բանակի նկատմամբ. ասում էին, որ ռուսական բանակը տաս անգամ ավելի ուժեղ էր: Այս հաղթանակը հավերժացրեց նրա՝ որպես պատերազմի հերոսի հիշատակը: Վոլտերը գրեց նրա կենսագրությունը, որը շատերին է հայտնի: Այնուհանդերձ, ինը տարի անց՝ 1709թ., նա ծանր պարտության մատնվեց Պետրոս ցարի կողմից Վոսկլայի ափերին՝ մերօրյա Ուկրաինայում գտնվող Պոլտավայի մոտակայքում. այս պարտությունից հերոսի կերպարը խամրեց, որն էլ ի վերջո աշխարհում առաջին Օմբուդսմանի հաստատության ծննդյան պատճառ դարձավ:

Պարտությունից հետո Շարլն անցավ Բենդեր, որն այժմ Մոլդովայում է, և հինգ տարի շարունակ սուլթանի երբեմն ցանկալի, երբեմն էլ՝ անցանկալի հյուրն էր: Փաստորեն, Շվեդիան՝ ժամանակի հզոր եվրոպական տերությունը, կառավարվում էր այս տարածքից մինչև 1714թ. աշունը, երբ Շարլը վերջնականապես որոշեց վերադառնալ իր թագավորություն և սալեցուցիչ երկշաբաթյա ճամփորդություն կատարեց իր մեռյալ՝ հասնելով Բալթիկ ծովի ափ, Պոմերանիայում գտնվող Ստրալսունդ քաղաքը, որն այն ժամանակ Շվեդիայի կազմում էր:

Այս ճամփորդությունից մեկ տարի առաջ՝ 1713թ. հոկտեմբերին, Թիմուրթաշ ամրոցում Շարլը ստորագրել էր հրամանագիր, որով ստեղծել էր Թագավորի գերագույն օմբուդսմանի ինստիտուտը: Այս Օմբուդսմանի խնդիրն էր ապահովել, որպեսզի Շվեդիայի դատավորները, զինձառայողները և քաղաքացիական ծառայողները հետևեին երկրի օրենքներին և իրենց համար սահմանված կանոններին: Թագավորը, որն այդ ժամանակ արդեն տասներեք տարի բացակայում էր երկրից՝ կապված Ռուսաստանի դեմ մղվող պատերազմների հետ, ակնհայտորեն զգում էր, որ անհրաժեշտ է մեկը, ով հայրենի երկրում իր անունից կհետևի իրավիճակին:

Թիմուրթաշը, որտեղ ստորագրվեց հրամանագիրը, գտնվում է մերօրյա Թուրքիայում՝ Ադրիանապոլսից (Էդիրն) մի փոքր հարավ: Այնուհանդերձ, Շվեդիայի ազգային արխիվում պահվող նամակագրությունը վկայում է այն մասին, որ որոշումից առաջ մանրակրկիտ քննարկումներ էին եղել, այդ թվում՝ այն ժամանակ արդեն դարեր ի վեր գոյություն ունեցած շվեդերեն «Օմբուդսման» բառի օգտագործման կողմ և դեմ փաստարկների լուրջ ուսումնասիրություն: Այս նամակների ամսաթվերը չեն պահպանվել, սակայն կարելի է հավատալ, որ նախքան Բենդերի տարածաշրջանից հեռանալը, Շարլ արքան արդեն մտահղացել էր ստեղծել Օմբուդսմանի հաստատությունը. որոշ գիտնականներ գտնում են, որ այս գաղափարը բխում է ոչ

միայն Օսմանյան վարչարարության ավանդույթներից և Դուրանից, այլ նաև հանդիպում է պատմության ավելի հին էջերում:

1709թ. հուլիսի վերջին հասնելով Պոլտավա, Շարլը և նրա հետևորդները շուտով բնակություն հաստատեցին Բենդերի հարևանությամբ գտնվող Վարնիցա գյուղում՝ Դենեստրի արևմտյան ափերին: Այս վայրը շատերին է հայտնի, և այսօր այս տարածքի մասին հոգ է տանում Մոլդովայի ազգային թանգարանը: Այստեղ նա մնաց մինչև 1713թ. փետրվարի 1-ը. այսպիսով, Մոլդովայի Վարնիցա գյուղը Թիմուրթաշի հետ մեկտեղ կարող է համարվել «օմբուդսման» հասկացության, ինչպես նաև այսօր միջազգայնորեն ընդունված իմաստով՝ «օմբուդսման» բառի ծննդավայր:

Վարնիցայից արքայի մեկնելու պատճառը նույնպես պատմության գրքերում արժանի տեղ է վայելում: Այն հայտնի է որպես Բենդերի ապստամբություն կամ, թուրքերենից շվեդերեն փոխառված բառերով՝ «*Kalabaliken i Bender*»: Այն ամենից ավելի հայտնի է նրանով, որ ենթադրվում է, թե եվրոպական պատմության մեջ դա վերջին անգամն է եղել, երբ երկրի թագակիրն անձամբ՝ զենքը ձեռքին, մասնակցել է կռվին: Խնդիրը ծագեց այն ժամանակ, երբ արքային հյուրընկալողներն այլևս նույն խանդավառությամբ չէին վերաբերվում բարձրաստիճան հյուրի մասին հոգ տանելու գործընթացին, քանզի վերջինս բացարձակապես արհամարհում էր իր տունդարձի կամ, առնվազն, իրեն չափազանց երկար որպես օթևան ծառայած այդ երկրից հեռանալու վերաբերյալ բոլոր խորհուրդները: Միայն այն բանից հետո, երբ ենիչերիների բազմահազար հորդան հրկիզեց արքայական տունը, և նա ու նրա սակավաթիվ մարդիկ այլևս չկարողացան պայքարել՝ փորձելով մոտակայքում գտնել ավելի ապահով կացարան, արքան թիկնապահների ուղեկցությամբ հեռացավ Թիմուրթաշ ամրոց:


Այս կերպ թագավորի կողմից 1713թ. ստեղծված Օմբուդսմանի հաստատությունը երբեմն չի նշվում որպես ողջ աշխարհի օմբուդսմանական ինստիտուտների նախահայր, որի պատճառը դրա սերտ կապն է գործադիր իշխանության հետ՝ այդ Օմբուդսմանն այնքան անկախ չէր, որքան այսօր պետք է լինի Օմբուդսմանը: Այնուհանդերձ, Օմբուդսմանի հասկացության ձևավորման գործում նրա դերը զգալի է: Շարլ արքայի և նրա նախորդների օրոք ուժեղ միապետությունը 1718թ. նոյեմբերին նրա մահվանից հետո թուլացավ, և շատ ավելի ուժեղ դարձավ խորհրդարանը: Արդյունքում, 1713թ. ստեղծված այս կառույցը 1719թ. մայիսին վերանվանվեց Արդարադատության կանցլեր՝ «*Justitiékanslern*», և իրականում դարձավ ոչ թե արքայի, այլ՝ խորհրդարանի ինստիտուտ: Սակայն, երբ արքան 18-րդ դարի վերջերին կրկին դարձավ բացարձակ իշխող, հաստատությունը վերստին կապվեց գործադիրի հետ: Այնուհանդերձ, խորհրդարանը չմոռացավ ինստիտուտի արժեքը:

Ռուսաստանի դեմ ևս մեկ պատերազմ տանուլ տալուց հետո կատարված հեղաշրջումից հետո Շվեդիայի 1809թ. նոր սահմանադրությամբ ստեղծվեց Շվեդիայի խորհրդարանական Օմբուդսմանը՝ «*Justitiombudsmannen*»՝ որպես խորհրդարանի նորանկախ ինստիտուտ: 1809թ. ստեղծված այս կառույցը մինչ այսօր՝ 200 տարի շարունակ, Շվեդիայի հասարակության անխափան աշխատող ինստիտուտ է, որն անհատական բողոքների հիման վրա ստուգումների և քննադատության միջոցով հսկում է հանրային ծառայողներին, օգնում օգտակար խորհուրդներով և լավ կառավարման օրինակներով, հազվադեպ կիրառելով իր սկզբնական դերը՝ որպես դատախազ իրավախախտներին մեղադրանք ներկայացնելով դատարանում:

Կարելի է ավելացնել, որ Արդարադատության կանցլերը նույնպես մինչ օրս Շվեդիայի սահմանադրական համակարգի անխափան աշխատող և անբաժանելի

տարր է: Շվեդիայից դուրս առաջին օմբուդսմանական հաստատությունը ստեղծվել է Ֆինլանդիայում 1918թ., երբ երկիրն անկախություն ձեռք բերեց Ռուսաստանից: Սկանդինավյան պետություններից դուրս առաջին օմբուդսմանական կառույցը ստեղծվել է Նոր Զելանդիայում՝ 1962 թվականին: Օմբուդսմանական հաստատություններ այսօր գոյություն ունեն աշխարհի ավելի քան 100 երկրներում, ինչը հիմնականում պայմանավորված է Դանիայի առաջին Օմբուդսման պրոֆեսոր Ստեֆան Հորվիցի կողմից վաղուց իրականացված իրազեկման աշխատանքներով (նա «*Folketingets Ombudsman*»-ի պաշտոնը ստանձնել էր 1955 թվականին):

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության կառուցվածքը



Քարտուղարության մեջ ընդգրկված են Աշխատակազմի պատասխանատու քարտուղարը, Պաշտպանի երկու խորհրդականները, Պաշտպանի և Պաշտպանի տեղակալի օգնականները, Պաշտպանի գործավարը, որոնք համակարգում են փոխգործակցությունը պետական տարբեր կառույցների, հասարակության տարբեր խմբերի, միջազգային կազմակերպությունների հետ, մշակում ծրագրեր աշխատակիցների մասնագիտական որակավորման և վերաորակավորման համար, օժանդակում Պաշտպանի և Պաշտպանի տեղակալի գործունեությանը:

Քաղաքացիների ընդունելության և նամակների բաժնի աշխատակիցները ընդունում են քաղաքացիներին և տրամադրում իրավաբանական խորհրդատվություն, ընդունում և նախնական մշակման են ենթարկում բողոքները, կատարում են այդ բողոքների հաշվառում և վերլուծություն, կազմակերպում են Պաշտպանի կամ Պաշտպանի տեղակալի կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելությունը, իրականացնում ընդհանուր բաժնի գործառույթներ: Ներկայումս բաժնում կիրառվում է բողոքների գրանցման և ամփոփման համակարգչային ծրագիր, որին ներկայացվող պահանջները մշակվել են աշխատակազմի կողմից, և որի պատրաստումն ու ներդրումը իրականացվել է հայ մասնագետների կողմից:

Մարդու իրավունքների պաշտպանության խմբերը անվճար իրավաբանական խորհրդատվություն են տրամադրում Պաշտպանի աշխատակազմին դիմող անձանց: Բացի դրանից՝ աշխատանքի, սոցիալական, տնտեսական ու մշակութային, քաղաքացիական ծառայողների, հատուկ և խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության խումբը, քրեադատավարական, քրեակատարողական, զինծառայողների իրավունքների պաշտպանության խումբը և քաղաքացիական ու գույքային իրավունքների պաշտպանության խումբը զբաղվում են հիմնականում այդ ոլորտներին վերաբերող իրավունքների ոտնահարման դեպքերի ուսումնասիրությամբ և այդ իրավունքների վերականգնման աշխատանքներով: Այս խմբերի մասնագետները մասնակցում են նաև արագ արձագանքման խմբի այցելություններին և տալիս են դրանց ընթացքում հայտնաբերված մարդու իրավունքների խախտումների իրավական գնահատականը: Արագ արձագանքման խումբը անհապաղ արձագանքում և տեղերում (հիվանդանոցներ, մանկատներ, ծերանոցներ, անձանց հարկադրական պահման վայրեր, նախնական կալանքի և ազատագրկման վայրեր, դատարան, դատախազություն, ոստիկանություն, համայնքներ, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններ) ուսումնասիրում է իրավունքի խախտման մասին ստացված հաղորդումները, անհրաժեշտության դեպքում դիտարկում է դատական նիստերի ընթացքը:

Գիտավերլուծական կենտրոնի աշխատակիցները մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող օրենսդրության կատարելագործմանը նպաստելու նպատակով կատարում են օրենսդրության և օրենսդրական նախագծերի վերլուծություններ և նախապատրաստում առաջարկներ՝ նկատի ունենալով դրանք միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին և նորմերին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը: Նրանք վերլուծում և ամփոփում են բողոքների վերաբերյալ կատարված աշխատանքները, նախապատրաստում Պաշտպանի տարեկան և այլ զեկույցները, ուղերձները, դիմումները:

Տեղեկատվության և հասարակության հետ կապերի խումբը իրականացնում է Պաշտպանի գործունեության լուսաբանումը ՉԼՍ-ների միջոցով, մշակում և իրականացնում է Պաշտպանի և նրա աշխատակազմի գործունեության մասին հասարակության և միջազգային հանրության իրազեկմանն ուղղված միջոցառումներ, իրականացնում է մարդու իրավունքներին վերաբերող տեղեկատվական նյութերի հրատարակում, դիտարկում է ՉԼՍ-ներով հրապարակված՝ մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող դեպքերն ու իրադարձությունները, որոնք կարող են հիմք ծառայել Պաշտպանի սեփական նախաձեռնությունների համար:

Միջազգային համագործակցության խումբը նպաստում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման ոլորտում միջազգային կապերի ստեղծմանն ու զարգացմանը, նախաձեռնում է միջազգային կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրականացում, ապահովում է՝

- Պաշտպանի աշխատակազմի կապը միջազգային մանատիպ կառույցների հետ,
- Պաշտպանի և նրա աշխատակիցների մասնակցությունը միջազգային կազմակերպությունների կողմից անցկացվող տարբեր միջոցառումներին,
- մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող միջպետական և միջազգային կազմակերպությունների կողմից կազմված զեկույցների և այլ նյութերի վերլուծությունը:

Վարչատնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակիցներն ապահովում են Պաշտպանի, Պաշտպանի տեղակալի և Աշխատակազմի բնականոն գործունեությունը:

Իրավունքի գերակայություն

Իրավունքի գերակայությունն նշանակում է, որ *պետք է գերակայի իրավունքը, որ հասարակության յուրաքանչյուր անդամ և յուրաքանչյուր հանրային ծառայող պետք է առաջնորդվեն օրենքի ողջամիտ մեկնաբանությամբ*, անկախ այն բանից, իրենք նախարար են, դատավոր, թե սովորական վարչական պաշտոնյա: Նրանք միշտ պետք է հնարավոր ամեն ինչ անեն, որպեսզի խելամտորեն հետևեն օրենքին: Իսկ եթե օրենքը վատն է, ապա այն պետք է փոխվի:

Հանրային ծառայողները չպետք է հետևեն կուսակցության ղեկավարի խորհուրդներին, ընկերության կանոններին, օրինական կամ ապօրինի ճանապարհով վճարված դրամի «օրենքին»: Նրանք պետք է ապահովեն իրավունքի գերակայությունը: Հանրային ծառայողները չպետք է կառավարեն, այլ պետք է օրենքի համաձայն ծառայեն քաղաքացիներին: Այդ պատճառով էլ նրանք կոչվում են հանրային *ծառայողներ*:

Իրավունքի գերակայությունը հասարակության կյանքում ապահովում է կարգուկանոն և կայունություն: Սա նշանակում է, որ պետական մարմինների որոշումները ողջամտության սահմաններում կանխատեսելի են, ինչն իր հերթին նշանակում է, որ որոշումները կիրարկելի են և կիրարկվում են: Այսինքն՝ առկա է օրենքով չնախատեսված հայեցողությունից պաշտպանվածության երաշխիք, ինչը նպաստում է ներդրումների ներգրավմանը և տնտեսության աճին: Ներդրողներն առնվազն կասկածով կվերաբերվեն իրենց գումարն այնպիսի երկրում ներդնելուն, որտեղ չեն կարող վստահ լինել, որ կվերացվեն պայմանագրի խախտումները և իրավախախտ անձինք պատասխանատվության կենթարկվեն հավուր պատշաճի:

Իրավունքի գերակայությունը ժամանակակից ժողովրդավարության անկյունաքարն է: Առանց դրա, ցանկացած գեղեցիկ խոսակցություն մարդու իրավունքների և ազատությունների մասին ապարդյուն է և կտրված քաղաքացիների առօրյա կյանքից: Առանց դրա մարդու իրավունքները և ազատությունները պատշաճ կերպով չեն կարող իրականացվել, և խախտումները կամ չեն շտկվում, կամ իրավախախտ անձինք պատասխանատվության չեն ենթարկվում:

«Լավ ապրողները», վերին էշելոնի մարդիկ, իշխողները կարող են կառավարել առանց իրավունքի գերակայության, քանի որ նրանք միշտ էլ կկարողանան առաջ տանել և պաշտպանել սեփական շահերը: Իրավունքի գերակայությունը պաշտպանում է հատկապես սովորական, շարքային մարդկանց՝ փողոցի անցորդին և դաշտում աշխատող կնոջը, նրանց երաշխավորելով նորմալ և արժանապատիվ կյանք:

Իրավունքի գերակայությունն այսօր շատ տարածված գաղափար է: Միջազգային մակարդակով գրեթե ցանկացած ելույթի մեջ ընդծվում է դրա կարևորությունը, իսկ ազգային քաղաքական գործիչները իրավունքի գերակայության մասին կրկնում են ամեն օր: Իրավունքի գերակայությունը դարձել է քաղաքական կոռեկտ արտահայտության լավագույն արտացոլում:

Այնուհանդերձ, սակավաթիվ են այն բանախոսները, ովքեր բացատրում են, թե ինչ են հասկանում՝ ասելով «իրավունքի գերակայություն»: Թվում է, թե ելույթ ունեցողներից շատերը չեն էլ խորհել դրա ազդեցության մասին և չեն պահանջում դրա ապահովումը:

Իրականում ամեն ինչ շատ պարզ է: Բոլորը պետք է հավասար լինեն օրենքի առջև: Ոչ ոք չպետք է օրենքից վեր լինի: Յուրաքանչյուրը պետք է ենթարկվի օրենքին: Իրավունքի գերակայությունը ժամանակակից եվրոպական ժողովրդավարության տարբերանշանն է:

Երկիրը պետք է միշտ օրենքի հիման վրա կառուցված լինի

Հանրային ծառայողների պատշաճ գործելակերպի ուղեցույց

Պետական մարմինները պետք է ձգտեն քաղաքացիների հետ հարաբերվելիս կատարյալ վարչարարություն ապահովել: Այս նպատակին հասնելու համար նրանք պետք է ապահովեն **ճիշտ, արդար** և **անկողմնակալ** վերաբերմունք քաղաքացիների նկատմամբ: Ստորև բերված է Օմբուդսմանի ուղեցույց ցանկը, որտեղ թվարկված են հանրային ծառայողների լավ գործելակերպի ուղղորդիչ սկզբունքները: Ցանկն օգտակար կարող է լինել այն հանրային ծառայողների համար, ովքեր ցանկանում են ավելի լավ «սպասարկել» իրենց «այցելուներին»:

Մարդկանց հետ **ճիշտ** վարվել՝ նշանակում է նրանց հետ աշխատել.

- արագորեն, առանց անհարկի ուշացումների,
- ճշգրտորեն՝ օրենքի և նրանց իրավունքները նախատեսող այլ իրավական ակտերի համաձայն,
- գիտակցաբար՝ հաշվի առնելով նրանց տարիքը, բարդ կանոնակարգեր հասկանալու կարողության չափը, նրանց հաշմանդամությունը, զգացմունքները, անձնական կյանքի գաղտնիությունը և հարմարավետության գործոնը,
- օգտակար լինելով՝ պարզեցնելով ընթացակարգերը, իրավունքների և ծառայությունների հետ կապված փաստաթղթերը և տեղեկությունները, վարելով պատշաճ գրառումներ, և տրամադրելով հստակ ու ստույգ տվյալներ այն ժամկետների կամ պայմանների վերաբերյալ, որոնցից շեղվելը կարող է անձին զրկել համապատասխան իրավունքներից,
- պատասխանատվությամբ՝ սովորաբար հակադրությունների չգնալով այն դեպքերում, երբ վեճ ծագելու մտավախություն կա:

Մարդկանց հետ **արդար** վարվել՝ նշանակում է.


- համանման իրավիճակներում գտնվող մարդկանց վերաբերվել նման ձևով,
- ընդունել, որ արդարությունը ապահովելու գործում կարևոր նշանակություն ունեցող կանոնները և կանոնակարգերը չպետք է այնքան կարծր կամ քարացած կիրառություն ստանան, որպեսզի անհավասար վերաբերմունքի պատճառ դառնան,
- խուսափել այնպիսի պատասխանատվության միջոցներից, որոնք համարժեք չեն կանոնների կատարում ապահովելու համար անհրաժեշտ միջոցներին,
- պատրաստ լինել վերանայել կանոնները և ընթացակարգերը և, եթե անհրաժեշտ է, փոխել դրանք,
- նախքան կանոններն այնպես փոխելը, որ դրանք կարող են բացասաբար անդրադառնալ անձի վրա, համարժեք ծանուցում տալ այդ մասին,
- ունենալ ներքին վերահսկողության համակարգ, որպեսզի անբարենպաստ որոշումը հնարավոր լինի կրկին անգամ դիտարկել և վերանայել առաջին անգամ որոշմանը չմասնակցած անձանց կողմից,
- անձանց տեղեկացնել, թե ինչպես կարելի է բողոքարկել, բողոքարկման ընթացքում լիարժեքորեն համագործակցել նրանց հետ և քննարկել խախտված իրավունքի վերականգնման մասին նրանց առաջարկները:

Մարդկանց հետ անկողմնակալ վարվել՝ նշանակում է.

- որոշումներ կայացնել տվյալ գործին առնչվող կանոնների և օրենքների հիման վրա, հաշվի չառնելով հարցի հետ առնչություն չունեցող հանգամանքները,
- խուսափել անձի մաշկի գույնով, սեռով, ամուսնական կարգավիճակով, ազգությամբ, մշակույթով, լեզվով, կրոնով, սեռական կողմնորոշմամբ, վերաբերմունքով, հեղինակությամբ կամ ով լինելով կամ ում ճանաչելով պայմանավորված կողմնակալությունից,
- եթե ծառայությունը մատուցվում է ըստ որոշակի առաջնահերթությունների գրաֆիկի, ապահովել այդ գրաֆիկի բաց և թափանցիկ լինելը,
- զգուշանալ անձի նախապաշարմունքները որոշումների վրա ազդող գործոններ դարձնելուց:

Հիմնված է բնօրինակի վրա, որը կազմվել է Իռլանդիայի Հանրապետության Ազգային օմբուդսմանի կողմից:

Բողոքների քննարկումը



«Հայաստանում մարդու իրավունքների խթանման և Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման» ծրագիր

**Ուսուցանողների վերապատրաստման դասընթաց
23-ը սեպտեմբերի, ուրբաթ – 25-ը սեպտեմբերի, կիրակի, 2005թ.**

* * * * *

Բողոքների օրինակների ուսումնասիրություններ

Օրինակ 1. Մայրաքաղաքի կենտրոնում գտնվող հիվանդանոցներից մեկը շուտով փակվելու է: Այդ որոշումը կայացնող քաղաքական մարմինը պնդում է, թե գումարը անհրաժեշտ է ծախսել հասարակության այլ կարիքների համար՝ կենսաթոշակները չափազանց ցածր են, քաղաքացիական ծառայողների աշխատավարձերն ամբողջությամբ չեն վճարվում, ոստիկանությանը լրացուցիչ միջոցներ են անհրաժեշտ: Պե՞տք է արդյոք միջամտի Օմբուդսմանը՝ որպես հիմք ընդունելով նախկինում հիվանդանոցին դիմող բոլոր անձանց առողջության պահպանման իրավունքը, կամ անգամ նշելով, թե առկա է մարդու իրավունքների խախտում:

Օրինակ 2. Երկրում մի շարք մարդիկ ունեցել են ոչ միայն տվյալ երկրի, այլ նաև՝ հարևան երկրի քաղաքացիություն: Երկրի համապատասխան քաղաքական մարմինը նախատեսում է պահանջել այդ քաղաքացիներից, որպեսզի նրանք ընտրեն, թե արդյոք ցանկանում են պահպանել տվյալ երկրի քաղաքացիությունը, որի դեպքում ստիպված կլինեն հրաժարվել հարևան երկրի քաղաքացիությունից: Պե՞տք է արդյոք Օմբուդսմանը միջամտի:

Օրինակ 3. Պետական մի ձեռնարկության հանձնարարվում է սխալ տեղերում կայանված ավտոմեքենաները տանել տուգանային հրապարակ, որը լիովին համահունչ է գործող օրենքներին և այլ իրավական ակտերին: Այդ ավտոմեքենաները չեն կարող վերադարձվել տերերին, քանի դեռ վերջիններս չեն վճարել սխալ կայանման տուգանքը, մեքենան տուգանային հրապարակ տանելու ծախսերը, ինչպես նաև որոշակի վճար՝ մեքենան չվերցնելու հետևանքով այն տվյալ ձեռնարկության կողմից պահվելու յուրաքանչյուր օրվա դիմաց: Պե՞տք է արդյոք Օմբուդսմանը միջամտի՝ մեջբերելով մեքենայատերերի անձնական սեփականության իրավունքը: Եվ եթե այո, ապա կա՞ որևէ տարբերություն կայանման տուգանքի, տեղափոխելու ծախսերի և մեքենան պահելու ծախսերի միջև: Իսկ ի՞նչ կարելի է ասել ուրիշների՝ ազատ ճանապարհներով երթևեկելու, կամ հետիոտների, այդ թվում՝ հաշմանդամների իրավունքների մասին, որոնք պարտավոր չեն սխալ կայանված մեքենաների պատճառով զրկվել մայրերից օգտվելու հնարավորությունից:

Օրինակ 4. Օմբուդսմանի աշխատակիցները նկատում են ճանապարհային նշաններ, որոնք ոչ ճշգրիտ ուղղություն են տալիս երթևեկությանը, կամ պարզ չեն, կամ անգամ ապակողմնորոշող: Օմբուդսմանը պե՞տք է միջամտի: Եվ եթե այո, ապա նա պե՞տք է պահանջի նման նշանների հիման վրա մինչ այդ նշանակված տուգանքների վերանայում:

Օրինակ 5. Որոշ նավաստիներ ռադիոհեռախոսով բողոքում են Օմբուդսմանին՝ պնդելով, թե ինչ-որ օտարերկրյա պետության իշխանություններ անարդար կերպով իրենց պահում են այդ երկրի տարածքից դուրս՝ նավի վրա: Օմբուդսմանը պե՞տք է արդյոք միջամտի:

Օրինակ 6. Օմբուդսմանին բողոք ներկայացնողները պնդում են, թե իրենք հազիվհազ են կարողանում վճարել հանրային ընկերությունների մատուցած էլեկտրաէներգիայի ծախսերը՝ պահանջելով Օմբուդսմանից միջամտել և պաշտպանել նրանց իրավունքները: Դիմումատուների մի մասը կենսաթոշակառուներ են, որոնք բողոքում են, որ պետական կենսաթոշակները ժամանակին և ողջ գումարով չեն վճարվում: Ինչպե՞ս պետք է արձագանքի Օմբուդսմանը:

Օրինակ 7. Դատապարտյալները պնդում են, որ քրեակատարողական հիմնարկում իրենց տրվող կերակուրները վատն են: Նրանք նաև պնդում են, թե ՔԿՀ-ի գործարանի աղմուկն այնքան բարձր է, որ վնասում է իրենց լսողությանը, և թե անարդար է, որ հիմնարկի մարզադահլիճը փակվել է այն պատճառանությամբ, թե դատապարտյալները կարող են այդ կերպ ֆիզիկապես կոփվել նոր հանցանքներ գործելու համար: Ինչպե՞ս պետք է արձագանքի Օմբուդսմանը:

Օրինակ 8. Երկու հարևան պետությունների փոխհարաբերությունների վատթարացման հետևանքով այդ պետություններից մեկից եկող և այլ հարևան պետություններ մեկնող ավտոմեքենաների մուտքը մյուս պետության կողմից արգելվում էր: Այդ կապակցությամբ բողոք է ներկայացվում Օմբուդսմանին: Ինչպե՞ս պետք է արձագանքի Օմբուդսմանը:

Օրինակ 9. Համայնքներից մեկում քաղաքական կուսակցություններից մեկը բողոքում է Օմբուդսմանին այն մասին, թե քաղաքական մեծամասնությունը մտադիր է տվյալ համայնքի դպրոցների ուսումնական ծրագրում ներառել կրոնի «չափազանց մեծ ծավալի» դասավանդում: Կուսակցությունը պնդում է, թե դա խախտում է կրթության մասին օրենսդրությունը և կրոնի ազատության իրավունքը: Ինչպե՞ս պետք է արձագանքի Օմբուդսմանը:

Օրինակ 10. Հարկային տեսչությունն օրաթերթերից մեկի աշխատանքների ստուգում է անցկացնում՝ հարկերից ապօրինաբար խուսափելու մեղադրանքի կասկածով: Թերթը բողոքում է Օմբուդսմանին՝ նշելով, թե ստուգայցի միակ դրդապատճառը քաղաքական է, և որ այն մամուլի ազատության խախտում է նշանակում: Ինչպե՞ս պետք է արձագանքի Օմբուդսմանը:

Օրինակ 11. Մեկ այլ թերթ պնդում է, թե երկրում թերթերի շրջանառության հարկը չափազանց բարձր է՝ այնքան բարձր, որ հանգեցնում է խոսքի ազատության և մամուլի ազատության խախտումների: Ինչպե՞ս պետք է արձագանքի Օմբուդսմանը:

Օրինակ 12. Նախկին վարչակարգի կողմից պետականացված շենքերում բնակարանների նկատմամբ այսպես կոչված «գրադեցման իրավունքի» տերերի միությունը պնդում է, թե իր անդամների նկատմամբ խտրականություն է ցուցաբերվել, քանի որ իրենք ի վիճակի չեն եղել մյուսներին հավասար պայմաններով գնել իրենց բնակարանները: Միևնույն ժամանակ, նման բնակարանների նախկին տերերի միությունը պնդում է, թե դա իրենց սեփականության իրավունքի խախտում է, քանի որ հետ չեն ստացել այդ բնակարանները, և չեն ստացել նույնիսկ բավարար փոխհատուցում: Ինչպե՞ս պետք է արձագանքի Օմբուդսմանը:

Օրինակ 13. Օմբուդսմանը հաճախակի բողոքներ է ստանում կոնկրետ պետական մարմնի վերաբերյալ, որը կարճաժամկետ աշխատակիցներ վարձելիս, ըստ ենթադրության, խտրականություն է կիրառում երկրի կոնկրետ հատվածի բնակիչների նկատմամբ: Ոստիկանությանը ներկայացված բողոքների հիման վրա որևէ մեկի նկատմամբ քրեական հետապնդում չի նախաձեռնվել, և համապատասխան դատախազը նշում է, թե ինքը գործ հարուցելու բավարար հիմքեր չունի: Աշխատողներ վարձելու համար պատասխանատու պետական ծառայողը կտրականապես մերժում է ցանկացած խտրականության փաստ և նշում, որ իրականում ինքը դեմ է խտրականության որևէ դրսևորման: Ի՞նչ կառաջարկեիք Օմբուդսմանին անել:

Օրինակ 14. Օմբուդսմանին է դիմում մի ընտանիքի հայր, որը վերջերս է տեղափոխվել նոր տարածք, որտեղ բնակվողներն ընտանիքի անդամների կարծիքով թշնամաբար են վերաբերվում իրենց նման մարդկանց նկատմամբ: Ընտանիքը երկու անգամ գրավոր դիմել է տեղական ջրային ընկերությանը, որպեսզի վերջինս ապահովի միացում համայնքի ջրային համակարգին, սակայն՝ ապարդյուն: Ընտանիքը կասկածում է, որ պատճառն այն է, որ այդ ընտանիքի անդամներն օտար երկրից են: Ընտանիքի անդամը հարցնում է, թե կարո՞ղ է ինքը բողոք ներկայացնել Օմբուդսմանին: Ի՞նչ կառաջարկեիք Օմբուդսմանին անել:

Օրինակ 15. Օմբուդսմանը քննել է բողոք ընդդեմ ոստիկանի, որը, ըստ ենթադրության, դաժան է վերաբերվել մի անձի նկատմամբ՝ կապված վերջինիս միասեռամուլ լինելու հետ: Կողմերը հակառակ պնդումներ են ներկայացնում, և հետաքննությունից չի կարելի ակնկալել տեղի ունեցածի մասին լրացուցիչ մանրամասների պարզաբանում: Ի՞նչ կառաջարկեիք Օմբուդսմանին անել:

Օրինակ 16. Օմբուդսմանին, որը գտնվում է մեծ մասամբ քրիստոնյաներով բնակեցված երկրում, դիմում է մի մահմեդական տիկին, որը վերադարձել է պետական մարմնում ընդունելությունների բաժնի աշխատակցի իր նախկին պաշտոնին: Երեխա ծնելու արձակուրդի ընթացքում նրա կրոնական հավատը խորացել է, և նա այժմ ցանկանում է գլխաշոր կրել աշխատավայրում՝ ի նշան իր հավատի: Վերադասը նրան ասում է, որ նա նախկինի նման պետք է կրի տվյալ գործակալության համազգեստը, որը գլխաշոր չի ներառում: Օմբուդսմանը մտավախություն ունի, որ տվյալ հակասության նկատմամբ հանրության ուշադրություն գրավելը կարող է հասարակական տրամադրությունների բախման պատճառ դառնալ: «Մենք իրավունք չունենք մեր կրոնը պահպանել: Մենք պահանջում ենք հարգել կրոնի ազատության՝ մեր սահմանադրական իրավունքը»: Մյուս կողմը պնդում է. «Մենք իրավունք չունենք պահպանել մեր երկիրն այնպիսին, ինչպիսին այն միշտ եղել է: Մենք պարտավոր ենք հանդուրժել ծայրահեղական այս աղբը, որն ի վերջո կարող է մեր վարչակարգի տապալման պատճառ դառնալ»:

Ի՞նչ կառաջարկեիք Օմբուդսմանին անել:

ՀՀ Ազգային ժողով
Օրենք ՀՕ- 23 – Ն
ՀՀՊՏ 2003/58 (293), 26.11.03

Ընդունվել է 21.10.2003
Ստորագրվել է 15.11.2003
Ուժի մեջ է մտել 01.01.2004

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

Սույն օրենքը սահմանում է Մարդու իրավունքների պաշտպանին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու կարգը, լիազորությունները, գործունեության պայմանները և երաշխիքները:

Հոդված 2. Մարդու իրավունքների պաշտպանը

Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Պաշտպան) ինքնուրույն և անկախ պաշտոնատար անձ է, որը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի համաձայն, իրականացնում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից խախտված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը:

Հոդված 3. Պաշտպանի նշանակումը

1. Պաշտպանի պաշտոնում նշանակվում է 35 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով ունի բարձրագույն կրթություն, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, հասարակության մեջ վայելում է բարձր հեղինակություն:

2. Պաշտպանին նշանակում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների 3/5-ից ավելիով՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի պատգամավորների առնվազն 1/5-ի կողմից առաջարկված թեկնածուներից:

Պաշտոնի նշանակվելիս Պաշտպանը տալիս է հետևյալ երդումը.

«Ստանձնելով մարդու իրավունքների պաշտպանի պարտականությունները՝ երդվում եմ, հավատարիմ լինելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն ու օրենքներին, հասարակական համակեցության և արդարության սկզբունքներին, պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

Երդվում եմ, որ պարտականություններս կկատարեմ անաչառ, առավելագույն բարեխղճությամբ և ջանասիրությամբ»:

3. Պաշտպանը պաշտոնում նշանակվում է 6 տարի ժամկետով:

Նույն անձը Պաշտպանի պաշտոնում չի կարող նշանակվել միմյանց հաջորդող երկու ժամկետից ավելի:

Հոդված 4. Պաշտպանի՝ այլ գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը

1. Պաշտպանը չի կարող զբաղեցնել պետական կամ այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

2. Պաշտպանը չի կարող լինել որեւէ կուսակցության անդամ կամ ընտրություններում առաջադրել իր թեկնածությունը, մասնակցել նախընտրական քարոզչությանը:

3. Պաշտպանը պարտավոր է սույն օրենքի պահանջներին չհամապատասխանող գործունեությունն ընդհատել պաշտոնավարության անցնելուց հետո՝ ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում:

Հոդված 5. Պաշտպանի անկախությունը

1. Պաշտպանն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ենթարկվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին, ինչպես նաեւ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին:

Պաշտպանը չի ենթարկվում պետական կամ տեղական ինքնակառավարման որեւէ մարմնի կամ պաշտոնատար անձի:

2. Պաշտպանը պարտավոր չէ բացատրություններ տալ, այդ թվում՝ նաեւ որպես վկա. իր մոտ գտնվող բողոքի կամ փաստաթղթի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման այլ կերպ. քան օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով:

Հոդված 6. Պաշտպանի լիազորությունների դադարումը

1. Պաշտպանի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետը լրանալուն հաջորդող օրվանից:

2. Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են միայն, եթե՝

1) խախտվել են սույն օրենքի 4-րդ հոդվածի պահանջները.

2) Պաշտպանի նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել.

3) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

4) նա Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով հրաժարական է ներկայացրել իր լիազորությունները վայր դնելու մասին.

5) Պաշտպանը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած.

6) նա առողջական վիճակի պատճառով ոչ պակաս, քան 6 ամիս անընդմեջ իր լիազորությունները չի կատարել.

7) Պաշտպանը մահացել է:

3. Վերոնշյալ դեպքերում Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին հարցը Ազգային ժողովի քննարկմանը կարող են ներկայացնել սույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն առաջադրման իրավունք ունեցող անձինք: Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների կեսից ավելիով:

4. Պաշտպանի լիազորությունների դադարեցման դեպքում նոր Պաշտպան պետք է նշանակվի նախորդի լիազորությունների դադարեցման օրվանից մեկ ամսվա ընթացքում: Մինչեւ նոր Պաշտպան նշանակվելը Պաշտպանի պարտականությունները կատարում է նրա տեղակալը:

Հոդված 7. Պաշտպանի քննարկմանը ենթակա բողոքները

1. Պաշտպանը քննարկում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաեւ միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով նախատեսված՝ մարդու (այդ թվում՝ նաեւ քաղաքացու) իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները:

Պաշտպանն իրավասու չէ միջամտել դատական վարույթին: **Նա կարող է տեղեկություններ պահանջել դատաքննության մեջ գտնվող ցանկացած գործի մասին եւ առաջարկներ ներկայացնել դատարան՝ երաշխավորելով քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ միջազգային իրավունքի նորմերով նախատեսված դատավարության իրավունքի պատշաճ ի կատար ածումը:** * Պաշտպանն իրավասու է դիմողին տալ առաջարկություններ կամ խորհրդատվություն՝ դատարանի որոշման, վճռի կամ դատավճռի հիմնավորվածությունը բողոքարկելու վերաբերյալ:

2. Պաշտպանը չի քննարկում ոչ պետական մարմինների եւ կազմակերպությունների ու դրանց պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ բողոքները:

3. Պաշտպանն իրավունք ունի ներկա լինել Հայաստանի Հանրապետության կառավարության, ինչպես նաեւ պետական այլ մարմինների նիստերին եւ ելույթ ունենալ, եթե քննարկվում են մարդու իրավունքներին եւ հիմնարար ազատություններին վերաբերող հարցեր, ինչպես նաեւ այդ նիստերի քննարկմանը ներկայացնել այդ կամ դրանց ենթակա մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների, ինչպես նաեւ սույն օրենքի պահանջների խախտման վերաբերյալ հարցեր:

4. Պաշտպանն իրավունք ունի ներկա լինել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերին, ելույթ ունենալ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, երբ քննարկվում են մարդու իրավունքներին եւ հիմնարար ազատություններին վերաբերող հարցեր:

Հոդված 8. Պաշտպանին դիմելու իրավունքը

1. Պաշտպանին կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական եւ այլ հայացքներից ու գործունակությունից:

Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչն իրավունք ունի իր նախաձեռնությամբ անարգել այցելել գորամիավորումներ, ձերբակալման վայրեր, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներ, ինչպես նաեւ հարկադրական պահման այլ վայրեր՝ դրանցում գտնվող անձանց դիմումներն ընդունելու համար:

Պաշտպանին իրավունք ունի դիմել ձերբակալում, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներում պատիժը կրող, ինչպես նաեւ հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձը:

Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչը պետք է երաշխավորվի գորամիավորումներում, ձերբակալման վայրերում, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներում, ինչպես նաեւ հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձանց հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու հնարավորությամբ: Պաշտպանի կամ նրա ներկայացուցիչների՝ այդ անձանց հետ խոսակցությունները ենթակա չեն միջամտության եւ գաղտնալսման:

* Ներկայումս Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության 2-րդ նախադասությամբ ամրագրված նորմը չի գործում / ՀՀ Սահմանադրական դատարանի 06.05.2005թ. հ.563 որոշման համաձայն/:

Պաշտպանին բողոք ներկայացնելը կամ նրա միջամտությունը չպետք է հանգեցնի բողոքողի նկատմամբ քրեական, վարչական կամ այլ պատժամիջոցի կիրառման կամ որեւէ խտրականության:

2. Պաշտպանին կարող են դիմել նաեւ իրավաբանական անձինք:

Իրավաբանական անձի անունից տրված բողոքը վերաբերում է մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտմանը, եթե իրավաբանական անձի իրավունքների խախտման հետեւանքով խախտվել են նաեւ նրա մասնակից ֆիզիկական անձանց (բաժնետերերի, փայատերերի, անդամների եւ այլն), ինչպես նաեւ նրա պաշտոնատար անձանց իրավունքներն ու հիմնարար ազատությունները, կամ այդ անձինք իրավաբանական անձի իրավունքների խախտման հետեւանքով վնաս են կրել, կամ առկա է այդ անձանց վնաս կրելու հնարավորությունը:

3. Ուրիշի իրավունքների պաշտպանության նպատակով Պաշտպանին կարող են դիմել միայն այդ անձանց ներկայացուցիչները, ինչպես նաեւ մահացած անձանց ընտանիքների անդամներն ու ժառանգները:

4. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ խնամակալության եւ հոգաբարձության մարմինների, չեն կարող Պաշտպանին բողոքներ ներկայացնել:

5. Պաշտոնատար անձինք իրավունք ունեն Պաշտպանին դիմել միայն իրենց՝ որպես ֆիզիկական անձանց խախտված իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 9. Պաշտպանին տրվող բողոքը

1. Բողոքը պետք է Պաշտպանին տրվի մեկ տարվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման մասին:

2. Սույն օրենքի գործողության առաջին տարում Պաշտպանին կարող են տրվել բողոքներ վերջին երեք տարվա ընթացքում մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ: Բողոքի համար որեւէ հատուկ ձեւ չպետք է սահմանվի, սակայն բողոքում պետք է նշված լինեն դիմող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը (հասցեն) կամ իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձեւը, գտնվելու վայրը: Բողոքում պետք է նշվեն նաեւ մարդու խախտված կամ խախտվող իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին տեղեկությունները:

Եթե դիմողն ունի գործի պարզաբանման եւ լուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր, ինչպես նաեւ բողոքի հետ կապված դատական կամ վարչական կարգով ընդունված ակտեր, ապա դրանք կարող են կցվել բողոքին:

3. Բողոքը ներկայացվում է գրավոր կամ բանավոր: Բանավոր բողոքների բովանդակությունը եւ սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված տվյալները պետք է արձանագրի պաշտպանը կամ նրա աշխատակազմը:

4. Ձերբակալված, նախնական կալանք կամ քրեական պատիժն իրականացնող հիմնարկներում պատիժը կրող, ինչպես նաեւ այլ հարկադրական պահման վայրերում գտնվող անձի կողմից Պաշտպանին ուղղված բողոքները եւ այլ փաստաթղթեր ենթակա չեն ստուգման ու որեւէ գրաքննության: Դրանք այդ հիմնարկների վարչակազմների կողմից 24 ժամվա ընթացքում պետք է ուղարկվեն Պաշտպանին:

5. Պաշտպանին ուղղված բողոքներն ընդունող մարմինը պարտավոր է դիմողի պահանջով վերջինին տրամադրել հավաստագիր (ստացական)՝ բողոքի ստացման մասին:

6. Պաշտպանին ուղղված բողոքների համար պետական տուրք չի գանձվում:

Հոդված 10. Պաշտպանի կողմից քննարկման ոչ ենթակա բողոքները

1. Պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք պետք է լուծվեն միայն դատական կարգով, ինչպես նաև դադարեցնում է բողոքի քննարկումը, եթե քննարկումն սկսելուց հետո շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացրել դատարան:

2. Պաշտպանը կարող է չքննարկել անանուն բողոքները եւ այն բողոքները, որոնք իր կարծիքով մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման մասին չեն վկայում կամ պահանջ չեն ներկայացնում:

3. Եթե բողոքում բարձրացված հարցն իր բնույթով կարող է լուծել նաև պետական այլ մարմինը կամ պաշտոնատար անձը, եւ եթե այդ անձը նախապես չի քննարկել տվյալ գործը, Պաշտպանը բողոքը ներկայացնողի համաձայնությամբ կարող է բողոքը քննարկման նպատակով փոխանցել նրան՝ վերահսկողություն սահմանելով դրա քննարկման նկատմամբ:

Այս դեպքում դիմողը տեղեկացվում է, որ բողոքն այլ պաշտոնատար անձի է փոխանցվել:

Հոդված 11. Բողոքների ընդունումը

1. Բողոքը ստանալով՝ Պաշտպանը որոշում է ընդունում՝

1) բողոքը քննարկման ընդունելու մասին.

2) դիմողին իր իրավունքների եւ ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին.

3) բողոքը ներկայացնողի համաձայնությամբ բողոքը այն պետական մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար այն անձին փոխանցելու մասին, որի իրավասությանն է պատկանում բողոքի ըստ էության լուծումը.

4) բողոքը չքննարկելու մասին:

2. Բողոքի քննարկման մերժումը պետք է հիմնավորվի սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն: Բողոքը չքննարկելու մասին որոշում ընդունելիս Պաշտպանը պարտավոր է դիմողին բացատրել այդ բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգը:

3. Պաշտպանն ընդունված որոշման պատճենն ուղարկում է դիմողին հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան բողոքն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում:

4. Պաշտպանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ սկսել հարցի քննարկումը, հատկապես այն դեպքերում, երբ տեղեկություն կա մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի բացառիկ հասարակական նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն օգտագործել իրենց պաշտպանության իրավական միջոցները:

5. Բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո Պաշտպանն իրավասու է դիմելու համապատասխան պետական մարմիններ կամ դրանց պաշտոնատար անձանց, որպեսզի նրանք նպաստեն բացահայտման ենթակա հանգամանքների ուսումնասիրմանը:

6. Բողոքում նշված հարցերի ուսումնասիրումը չի կարող կատարել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար այն անձը, որի որոշումները կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են:

Հոդված 12. Բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրումը

1. Բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո Պաշտպանը բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով իրավասու է՝

1) անարգել այցելել ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն, ներառյալ՝ գործադիր կառույցներ, անձանց հարկադրական պահման վայրեր, այդ թվում՝ նաև նախնական կալանքի եւ ազատազրկման վայրեր.

2) ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջել եւ ստանալ բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր.

3) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից կամ դրանց պաշտոնատար անձանցից եւ պետական ծառայողներից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ բողոքի ուսումնասիրման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ.

4) իրավասու պետական մարմիններին հանձնարարել բողոքի ուսումնասիրության ընթացքում պարզելու ենթակա հարցերի վերաբերյալ անցկացնել փորձագիտական հետազոտություններ եւ պատրաստել եզրակացություններ.

5) ծանոթանալ քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական, տնտեսական եւ այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ դատավճիռները, վճիռները, որոշումներն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է գործերի հարուցումը.

6) ծանոթանալ բողոքին առնչվող ցանկացած նյութի եւ փաստաթղթի:

Պաշտպանի գրավոր որոշմամբ սույն մասի 1-ին, 2-րդ, 5-րդ եւ 6-րդ կետերով նախատեսված լիազորությունները կարող են իրականացնել նաև Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները կամ փորձագետների խորհրդի անդամները:

2. Պետական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկություններին Պաշտպանը կարող է ծանոթանալ օրենքով սահմանված կարգով:

3. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք պարտավոր են իրենց իրավասությանը վերաբերող պահանջվող նյութեր եւ փաստաթղթեր, ինչպես նաև բողոքը քննարկելու համար անհրաժեշտ ցանկացած տեղեկություն ներկայացնել Պաշտպանին անվճար եւ անարգել:

4. Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը կամ տեղեկությունները պետք է ուղարկվեն Պաշտպանին հնարավորինս արագ, հարցումն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ:

5. Իր լիազորությունների շրջանակում Պաշտպանն օգտվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև կազմակերպությունների ղեկավարների եւ այլ պաշտոնատար անձանց, հարկադրական պահման վայրերի վարչակազմի մոտ անհետաձգելի ընդունելության իրավունքից:

Հոդված 13. Բողոքների վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պարզաբանումները

1. Բողոքներն ուսումնասիրելիս Պաշտպանը պարտավոր է հնարավորություն տալ այն պետական մարմնին, տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են, պարզաբանումներ տալ բողոքի եւ

կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև հիմնավորել իրենց դիրքորոշումն ամբողջությամբ:

2. Բողոքի վերաբերյալ քննարկման արդյունքները, քննարկման ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում, հանձնվում են այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են: Վերջինս պարտավոր է իր դիրքորոշումն ու պարզաբանումները Պաշտպանին ուղարկել ուսումնասիրության արդյունքներն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Նշված ժամկետը կարող է երկարաձգել Պաշտպանը:

Հոդված 14. Բողոքների կամ դրանց բովանդակության հրապարակումը

1. Մինչև բողոքի վերաբերյալ Պաշտպանի կողմից վերջնական որոշման ընդունումը, քննարկման ենթակա բողոքները կամ դրանց բովանդակությունը հրապարակման ենթակա չեն:

2. Պաշտպանն իրավունք չունի բողոքի ուսումնասիրման ընթացքում իրեն հայանի դարձած դիմողի կամ այլ անձանց մասին տվյալներ հրապարակել՝ առանց նրանց գրավոր համաձայնության:

Հոդված 15. Պաշտպանի կողմից ընդունվող որոշումները

1. Զննարկված բողոքի արդյունքների հիման վրա Պաշտպանը պարտավոր է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

1) առաջարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումների կամ գործողությունների (անգործության) մեջ նա տեսնում է մարդու իրավունքների եւ ազատությունների խախտում, վերացնելու թույլ տրված խախտումները՝ նշելով մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ եւ կատարման ենթակա հնարավոր միջոցառումները.

2) մարդու իրավունքների եւ ազատությունների խախտման բացակայության մասին, եթե բողոքի քննարկման ընթացքում չի բացահայտվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտում.

3) դիմել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան՝ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման հարցերով.

4) մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի եւ դրա պաշտոնատար անձի՝ օրենքին եւ այլ իրավական ակտերին հակասող նորմատիվ իրավական ակտերն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատարան հայց ներկայացնելու մասին, եթե խախտում թույլ տված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար անձը սահմանված ժամկետում ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր չի ճանաչում իր համապատասխան իրավական ակտը.

5) առաջարկել իրավասու պետական մարմիններին՝ կարգապահական կամ վարչական տույժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության կանչել պաշտոնատար այն անձին, որի որոշումներով կամ գործողություններով (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները, եւ (կամ) որը խախտել է սույն օրենքի պահանջները:

2. Պաշտպանը պարտավոր է բողոքի վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասում նշված որոշման պատճենը, որոշումն ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում, ուղարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվել են:

3. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար այն անձը, որն ստացել է Պաշտպանի՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված միջնորդությունը, պարտավոր է դա ստանալու

օրվանից քսանօրյա ժամկետում ձեռնարկված միջոցառումների մասին գրավոր հայտնել Պաշտպանին: Անհրաժեշտության դեպքում Պաշտպանի համաձայնությամբ այս ժամկետը կարող է երկարաձգվել:

4. Պաշտպանը, բողոքի վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասում նշված իր որոշման պատճենը, որոշումն ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում, պարտավոր է ուղարկել բողոքն ուղարկած անձին:

Պաշտպանի որոշումը չի կարող խոչընդոտ դառնալ անձի կողմից իր իրավունքները եւ հիմնարար ազատություններն օրենքով չարգելված այլ միջոցներով պաշտպանելու համար:

5. Պաշտպանը կարող է անհրաժեշտության դեպքում հատուկ զեկույցներ ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին եւ Ազգային ժողով:

6. Պաշտպանը կարող է զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել իր միջնորդությանը չպատասխանած կամ միջնորդության պահանջները չկատարած կամ անբավարար կատարած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վերաբերյալ հատուկ տեղեկություն՝ Պաշտպանի որոշման եւ միջնորդության վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձանց պատասխանների հետ միասին, եթե սպառվել են պետական մարմիններում հարցը լուծելու համար Պաշտպանի բոլոր հնարավորությունները:

Հոդված 16. Պաշտպանի կողմից տրվող պարզաբանումները

Պաշտպանն իրավասու է մարդու իրավունքների եւ ազատությունների մասին տեղեկատվության ուսումնասիրության եւ վերլուծության արդյունքների հիման վրա, ուսումնասիրության արդյունքների ամփոփման նպատակով պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին ու դրանց պաշտոնատար անձանց ուղարկել խորհրդատվական բնույթի պարզաբանումներ եւ առաջարկություններ:

Հոդված 17. Պաշտպանի զեկույցը

1. Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը Հայաստանի Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության մարմիններ է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում իր գործունեության եւ երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին զեկույց, իսկ Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի ընթացքում դա ներկայացնում է Ազգային ժողովի նիստում: Պաշտպանը զեկույցը ներկայացնում է նաեւ զանգվածային լրատվամիջոցներին եւ համապատասխան հասարակական կազմակերպություններին:

2. Հասարակական հնչելություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների, ինչպես նաեւ խախտումները զանգվածաբար չվերացնելու դեպքերում Պաշտպանը կարող է հանդես գալ արտահերթ հրապարակային զեկույցներով:

Հոդված 18. Պատասխանատվությունը օրենքի պահանջների խախտման համար

Պաշտպանի որոշումների վրա ազդելու նպատակով նրա գործունեությանը միջամտելը կամ պաշտոնատար անձանց կողմից սույն օրենքով սահմանված Պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը կամ սահմանված ժամկետներում նյութեր կամ փաստաթղթեր չներկայացնելը կամ Պաշտպանին սպառնալը կամ նրան վիրավորանք հասցնելն առաջացնում է պատասխանատվություն՝ դատավորի կամ դատարանի հանդեպ համանման խախտումների համար նախատեսված կարգով եւ չափով:

Հոդված 19. Պաշտպանի անձեռնմխելիությունը

1. Պաշտպանն իր լիազորությունների ողջ ժամկետի ընթացքում օժտված է անձեռնմխելիությամբ: Նրա նկատմամբ քրեական հետապնդում չի կարող հարուցվել, նա չի կարող կալանավորվել կամ ձերբակալվել: Պաշտպանը, նրա բնակարանը չեն կարող խուզարկվել առանց Հայաստանի

Հանրապետության Ազգային ժողովի համաձայնության: Պաշտպանի անձեռնմխելիությունը տարածվում է նաև նրա ուղեբեռների, նամակագրության, Պաշտպանի օգտագործած կապի միջոցների, ինչպես նաև նրան պատկանող փաստաթղթերի վրա:

2. Պաշտպանին հանցանքի վայրում բռնելու դեպքում ձերբակալությունն իրականացնող պաշտոնատար անձն անմիջապես այդ մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին, որը պետք է որոշում ընդունի դրա հետագա կիրառման համար համաձայնություն տալու մասին: Նման համաձայնություն 24 ժամվա ընթացքում չստանալու դեպքում Պաշտպանն անմիջապես պետք է ազատ արձակվի:

3. Պաշտպանն իրավունք ունի հրաժարվելու իր պարտականությունները կատարելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին քրեական կամ քաղաքացիական գործով որպես վկա ցուցմունքներ տալուց:

Հոդված 20. Պաշտպանի սոցիալական երաշխիքները

1. Պաշտպանի աշխատավարձը հավասար է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի աշխատավարձին:

2. Պաշտպանն ունի 30 աշխատանքային օր տեւողությամբ ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:

3. Պաշտպանն իր լիազորությունների իրականացման ողջ ժամանակահատվածում ազատվում է ժամկետային զինվորական ծառայությունից, գորհավալաքննից եւ վարժական հավաքներից:

Հոդված 21. Պաշտպանի անվտանգությունը

Պաշտպանը եւ նրա ընտանիքի անդամները գտնվում են պետության պաշտպանության ներքո: Իրավասու պետական մարմինները Պաշտպանի դիմումի հիման վրա պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ Պաշտպանի եւ նրա ընտանիքի անդամների անվտանգությունն ապահովելու նպատակով:

Հոդված 22. Պաշտպանի տեղակալը

1. Պաշտպանն ունի տեղակալ, որը նշանակվում է Պաշտպանի առաջարկությամբ, սույն օրենքով Պաշտպանի նշանակման համար նախատեսված կարգով եւ պայմաններով, ունի անկախության եւ գործունեության նույն երաշխիքները:

2. Պաշտպանի տեղակալն իրականացնում է Պաշտպանի լիազորությունները Պաշտպանի հանձնարարությամբ, նրա բացակայության ժամանակ կամ Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում: Վերջին դեպքում Պաշտպանի տեղակալն օգտվում է Պաշտպանի համար նախատեսված բոլոր իրավունքներից, երաշխիքներից ու անձեռնմխելիությունից:

3. Պաշտպանի տեղակալի այլ լիազորություններ սահմանում է Պաշտպանը:

Հոդված 23. Պաշտպանի աշխատակազմի կարգավիճակը

1. Պաշտպանի գործունեությունն ապահովելու համար Պաշտպանը ստեղծում է աշխատակազմ:

2. Պաշտպանի աշխատակազմն իրականացնում է Պաշտպանի գործունեության իրավաբանական, կազմակերպչական, գիտական-վերլուծական, տեղեկատվական եւ այլ ապահովում:

3. Պաշտպանի աշխատակազմը պետական հիմնարկ է, որն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով եւ իր անվամբ կնիք:

Մարզերում կարող են ստեղծվել մարդու իրավունքների պաշտպանի մարզային ներկայացուցչություններ:

4. Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ չեն եւ աշխատում են ժամկետային աշխատանքային պայմանագրերով: Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները պահպանում են պայմանագրի ժամկետը լրանալուց հետո նախկին ծառայությանն անցնելու երաշխիքը, եթե աշխատակազմում աշխատանքի անցնելուց առաջ քաղաքացիական ծառայողներ են եղել: Աշխատակազմում նրանց աշխատանքը հավասարեցվում է քաղաքացիական ծառայությանը:

5. Այն անձինք, ովքեր որեւէ պաշտոն են զբաղեցնում Պաշտպանի աշխատակազմում, չեն կարող մեղադրվել, հետաքննության ենթարկվել, ձերբակալվել, կալանքի ենթարկվել կամ դատի տրվել Պաշտպանի հանձնարարականի համաձայն իրենց պարտականությունները կատարելիս, որեւէ գործողության, կարծիքի կամ ընդունած որոշման համար: Եթե աշխատակազմում որեւէ պաշտոն զբաղեցնող անձը ձերբակալվում է, կալանքի է ենթարկվում կամ դատի է տրվում այլ հանգամանքի պատճառով, ապա մեղադրող մարմինը պետք է սահմանված կարգով եւ ժամկետում այդ մասին տեղեկացնի Պաշտպանին:

Հոդված 24. Պաշտպանի գործունեության ֆինանսավորումը

1. Պաշտպանը եւ նրա աշխատակազմը ֆինանսավորվում են պետական բյուջեից՝ առանձին տողով:

Պաշտպանի եւ նրա աշխատակազմի բյուջետային հայտը կազմում եւ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում Պաշտպանը: Հայտն առանց փոփոխության ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում:

Եթե Հայաստանի Հանրապետության կառավարության կարծիքով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում պետք է նախատեսել ավելի քիչ ծախսեր, քան ներկայացված է Պաշտպանի բյուջետային հայտում, ապա Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ Ազգային ժողով պետք է ներկայացնի նաեւ իր առաջարկն այդ ծախսերի վերաբերյալ եւ նվազեցման հիմնավորումը:

2. Պաշտպանն ինքնուրույն է մշակում եւ իրագործում իրեն վերապահված միջոցների ծախսման հաշվարկը:

3. Ֆինանսական հաշվետվությունը Պաշտպանը ներկայացնում է սույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 25. Պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը

1. Պաշտպանը հաստատում է աշխատակազմի կառուցվածքը, նրա կանոնակարգը եւ անմիջականորեն ղեկավարում է աշխատակազմի աշխատանքները:

2. Ծախսերի հաշվարկի շրջանակներում Պաշտպանը որոշում է իր աշխատակազմի աշխատողների թվաքանակը եւ հաստիքացուցակը:

3. Աշխատակազմի ղեկավարման հետ կապված հարցերով Պաշտպանն արձակում է հրամաններ:

Հոդված 26. Փորձագիտական խորհուրդը

1. Պաշտպանը, խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով, կարող է ստեղծել փորձագետների խորհուրդ՝ կազմված մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ ունեցող անձանցից:

2. Փորձագիտական խորհրդի անդամներին հրավիրում է Պաշտպանը:

3. Փորձագիտական խորհրդի կազմը չի կարող գերազանցել 20 անդամը:

4. Փորձագիտական խորհրդի անդամները ներգրավվում են կամավորական հիմունքներով եւ իրենց գործունեությունն իրականացնում են հասարակական կարգով:

Հոդված 27. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 6-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը եւ 3-րդ մասը, 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն ուժի մեջ են մտնում Պաշտպանի նշանակման եւ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան դիմելու իրավունքի մասին դրույթները Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանելուց հետո:

2. Մինչեւ սահմանադրական փոփոխությունները, Հայաստանի Հանրապետության Նախագահը՝

1) Ազգային ժողովի խմբերի եւ խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո նշանակում է Պաշտպանին.

2) տալիս է 6-րդ հոդվածով, 19-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով պահանջվող համաձայնությունները:

Առաջին Պաշտպանի պաշտոնավարման ժամկետը լրանում է սույն հոդվածի առաջին մասով սահմանված սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեսուներորդ օրը:

Առաջին Պաշտպանը նշանակվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում:

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2004 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ Ազգային ժողով
Օրենք ՀՕ- 41 – Ն
ՀՀՊՏ 2004/18 (317), 31.03.04

Ընդունվել է 18.02.2004
Ստորագրվել է 16.03.2004
Ուժի մեջ է մտել 31.12.2004

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՍԱՍԻՆ

/Քաղվածք/

ԳԼՈՒԽ 2.

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 4. Վարչարարության օրինականությունը

1. Վարչական մարմինները պարտավոր են հետեւել օրենքների պահպանմանը:
2. Վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:

Հոդված 5. Ձեռական պահանջները չարաշահելու արգելքը

Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձեռական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որեւէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Հոդված 6. Հայեցողական լիազորությունները սահմանափակելը

1. Հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմինն վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որեւէ մեկը:
2. Հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու եւ քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների եւ ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության եւ կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաեւ հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

Հոդված 7. Կամայականության արգելքը

1. Վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որեւէ հիմք:

Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

2. Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձեռով, ապա միանման դեպքերում հետագայում եւս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձեռով:

Վարչական մարմինն այդ սահմանափակումից կարող է հրաժարվել, եթե գերակա շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում:

Հոդված 8. Վարչարարության համաչափությունը

Վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով հետապնդվող նպատակին, եւ դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ եւ չափավոր:

Հոդված 9. Առավելագույնի սկզբունքը

1. Վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում:

2. Եթե անձանց կողմից վարչական մարմիններ ներկայացված փաստաթղթերը (տվյալներ, տեղեկություններ) իրենց մեջ բովանդակային առումով ներառում են անհրաժեշտ այլ փաստաթղթերի բովանդակություն, ապա վերջիններս այլեւս չեն կարող պահանջվել լրացուցիչ կամ առանձնացված ձեռով:

3. Եթե վարչական մարմինների կողմից անձանց տրված թույլտվությունները բովանդակային առումով ներառում են այլ թույլտվություններ, ապա դրանք նույնպես համարվում են տրված:

Հոդված 10. Հավաստիության կանխավարկածը

1. Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն եւ իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

2. Անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:

Հոդված 11. Տնտեսավարությունը

Վարչական մարմինն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է գործել այնպես, որպեսզի առանց իր լիազորությունների կատարմանը վնասելու՝ առավել տեղմ ժամկետում, առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը:

Հոդված 12. Այլ սկզբունքներ կիրառելը

Մույն գլխով սահմանված վարչարարության հիմնարար սկզբունքներն սպառնիչ չեն եւ չեն կարող արգելք լինել վարչարարության այլ սկզբունքներ կիրառելու համար:

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՆ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐ
/Փարիզյան սկզբունքներ/**

Ընդունված են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի
20 դեկտեմբերի 1993թ. 48/134 բանաձևով

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ազգային հաստատությունը պետք է օժտված լինի մարդու իրավունքները խթանելու և պաշտպանելու լիազորություններով:
2. Ազգային հաստատությանը տրվում են հնարավորինս լայն իրավասություններ, որոնք հստակ սահմանվում են նրա կազմը և լիազորությունների շրջանակները ամրագրող սահմանադրական կամ օրենսդրական ակտում:
3. Ազգային հաստատությունը պետք է ունենա, մասնավորապես, հետևյալ պարտականությունները՝
 - ա) կառավարությանը, խորհրդարանին կամ ցանկացած այլ լիազոր մարմնի, խորհրդատվական հիմունքով՝ կամ շահագրգիռ մարմինների խնդրանքով, կամ առանց վերադաս ատյանին դիմելու ցանկացած հարց քննարկելու իր իրավունքի իրականացման կարգով, ներկայացնել կարծիքներ, եզրակացություններ, առաջարկներ և զեկույցներ մարդու իրավունքների խթանմանն ու պաշտպանությանը վերաբերող ցանկացած հարցով. ազգային հաստատությունը կարող է որոշել հրապարակել դրանք. այդ կարծիքները, եզրակացությունները, առաջարկություններն ու զեկույցները, ինչպես և ազգային հաստատության ունեցած ցանկացած բացառիկ իրավունք, վերաբերում են հետևյալ բնագավառներին՝
 - ցանկացած օրենսդրական և վարչական, ինչպես նաև դատական մարմիններին վերաբերող դրույթներ, ուղղված մարդու իրավունքների պաշտպանության ապահովմանն ու ընդլայնմանը. այդ կապակցությամբ ազգային հաստատությունը պետք է ուսումնասիրի գործող օրենսդրությունն ու վարչական դրույթները, ինչպես նաև օրինագծերն ու առաջարկները, և մշակի այնպիսի առաջարկություններ, որոնք նպատակահարմար է համարում այդ դրույթները մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին համապատասխանեցնելը ապահովելու համար. անհրաժեշտության դեպքում հաստատությունը պետք է առաջարկի նոր օրենքի ընդունում, լրացումների և փոփոխությունների կատարում գործող օրենսդրության մեջ և վարչական միջոցների ընդունում կամ բարեփոխում,
 - մարդու իրավունքների խախտման ցանկացած դեպք, որը հաստատությունը որոշում է քննարկել,
 - զեկույցների նախապատրաստում երկրում տիրող իրավիճակի մասին՝ ընդհանրապես մարդու իրավունքների առնչությամբ, ինչպես նաև առավել կոնկրետ հարցերի վերաբերյալ,
 - կառավարության ուշադրության հրավիրում երկրի ցանկացած մասում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտման դեպքերին, այդպիսի

խախտումների վերացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկների ներկայացում և, անհրաժեշտության դեպքում, կառավարության դիրքորոշման ու վերաբերմունքի վերաբերյալ կարծիքի արտահայտում:

- բ) խթանել և երաշխավորել ազգային օրենսդրության և իրավակիրառական պրակտիկայի ներդաշնակեցումը մարդու իրավունքների ոլորտի միջազգային փաստաթղթերին, որոնց որպես կողմ միացել է պետությունը, և դրանց արդյունավետ կիրառումը,
- գ) խրախուսել վերոնշյալ փաստաթղթերի վավերացումը կամ դրանց միանալը և ապահովել դրանց կիրառումը,
- դ) մասնակցել այն զեկույցների նախապատրաստմանը, որոնք, ի կատարումն իրենց պայմանագրային պարտավորությունների, պետությունները պետք է ներկայացնեն ՄԱԿ-ի մարմիններին ու կոմիտեներին, ինչպես նաև տարածաշրջանային հաստատություններին, և, անհրաժեշտության դեպքում, այդ հարցով ներկայացնել իր կարծիքը՝ արժանի հարգանքով վերաբերվելով նրանց անկախությանը,
- ե) համագործակցել Միավորված Ազգերի Կազմակերպության և այդ համակարգի այլ մարմինների, տարածաշրջանային և այլ երկրների ազգային հաստատությունների հետ, որոնք իրավասություններ ունեն մարդու իրավունքների խթանման և պաշտպանության բնագավառում,
- զ) աջակցել մարդու իրավունքների բնագավառում հետազոտական և կրթական ծրագրերի մշակմանը և մասնակցել դրանց իրականացմանը դպրոցներում, համալսարաններում և մասնագիտական շրջանակներում,
- է) հրապարակայնացնել մարդու իրավունքները և խտրականության բոլոր ձևերի՝ մասնավորապես, ռասայական խտրականության դեմ մղվող պայքարում կիրառվող ջանքերը հասարակության իրազեկության բարձրացման միջոցով, իրականացնելով, հատկապես, տեղեկատվական ու կրթական աշխատանքներ և օգտագործելով լրատվական բոլոր միջոցները:

ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱԶՄԱԿԱՐԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

1. Ազգային հաստատության կազմավորումը և նրա անդամների նշանակման կարգը՝ ընտրությամբ կամ այլ կերպ, պետք է հաստատվի ըստ համապատասխան ընթացակարգի, որը մարդու իրավունքների խթանման ու պաշտպանության ոլորտում ընդգրկված հասարակական ուժերի /քաղաքացիական հասարակության/ բազմակարծիք ներկայացուցչության ապահովման համար կրնձեռի բոլոր հնարավոր երաշխիքները, մասնավորապես, լիազորություններից օգտվելու միջոցով, ինչը հնարավոր կդարձնի արդյունավետ համագործակցություն հաստատել հետևյալ հաստատությունների հետ կամ նրանց ներկայացուցիչների մասնակցության միջոցով.

- ա/ մարդու իրավունքների և ռասայական խտրականության դեմ պայքարի հարցերով զբաղվող ոչ կառավարական կազմակերպություններ, արհմիություններ, շահագրգիռ հասարակական և մասնագիտական կազմակերպություններ, օրինակ՝ իրավաբանների, բժիշկների, լրագրողների միություններ և անվանի գիտնականներ,
- բ/ տարբեր փիլիսոփայական և կրոնական հոսանքներ,
- գ/ համալսարաններ և որակյալ փորձագետներ,
- դ/ խորհրդարան,

ե/ կառավարության ստորաբաժանումներ /այդ դեպքում նրանց ներկայացուցիչները մասնակցում են հարցերի քննարկմանը միայն որպես խորհրդատուներ/:

2. Ազգային հաստատությունը պետք է ունենա իր ենթակառուցվածքը, որը կապահովի նրա անխափան գործունեության իրականացումը, մասնավորապես՝ բավարար ֆինանսավորումը: Այդպիսի ֆինանսավորման նպատակն է հնարավորություն տալ ազգային հաստատությանը ունենալու իր սեփական աշխատակազմն ու շենքը, որպեսզի այն կառավարությունից անկախ լինի և չենթարկվի ֆինանսական հսկողության, ինչը կարող է ազդել հաստատության անկախության վրա:

3. Հաստատության անդամների կայուն մանդատ ապահովելու համար, առանց որի իրական անկախություն չի կարող լինել, նրանց նշանակումը պետք է կատարվի պաշտոնական որոշումով, որը պետք է սահմանի մանդատի գործողության կոնկրետ ժամկետը: Մանդատը կարող է վերահաստատելի լինել՝ ազգային հաստատության կազմի բազմակարծությունն ապահովելու պայմանով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Իր գործունեության շրջանակներում ազգային հաստատությունը պետք է՝

ա/ ազատ քննարկի իր իրավասության շրջանակներում գտնվող բոլոր հարցերը, անկախ նրանից՝ դրանք ներկայացված են եղել կառավարության կողմից, թե քննարկման են ընդունվել հաստատության անդամների կամ ցանկացած դիմորդի առաջարկով՝ առանց առավել բարձր ատյանի դիմելու,

բ/ ունկնդրի ցանկացած անձի և ստանա ցանկացած տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են իր իրավասության ոլորտին վերաբերող իրավիճակների գնահատման համար,

գ/ անմիջականորեն կամ ցանկացած լրատվական միջոցով դիմի հասարակայնությանը՝ հատկապես իր կարծիքների և եզրակացությունների հրապարակայնացման համար,

դ/ կանոնավոր կերպով հանդիպումներ անցկացնի, անհրաժեշտության դեպքում նաև իր բոլոր անդամների մասնակցությամբ՝ նրանց նախօրոք պատշաճ կերպով տեղեկացնելով,

ե/ կազմի աշխատանքային խմբեր, ըստ անհրաժեշտության, իր անդամներից և ստեղծի տեղական կամ տարածաշրջանային բաժանմունքներ՝ իր գործառնությունների իրականացմանն աջակցելու համար,

զ/ խորհրդատվություններ անցկացնի այլ՝ դատական և ոչ դատական, մարմինների հետ, որոնք պատասխանատու են մարդու իրավունքների խթանման և պաշտպանության համար /մասնավորապես՝ օմբուդսմաններ, միջնորդ դատավորներ և այլ համանման հաստատություններ/,

է/ հաշվի առնելով այն հիմնարար դերը, որ կատարում են ոչ կառավարական կազմակերպությունները ազգային հաստատությունների գործունեության ընդլայնման հարցում, զարգացնի կապերը այն ոչ կառավարական կազմակերպությունների հետ, որոնք զբաղվում են մարդու իրավունքների խթանումով և պաշտպանությամբ, սոցիալական ու տնտեսական զարգացմամբ, ռասիզմի դեմ պայքարով, առավել խոցելի խմբերի պաշտպանությամբ /մասնավորապես՝ երեխաներ, միգրանտ աշխատողներ, փախստականներ, ֆիզիկական և մտավոր թերություններ ունեցող անձինք/ և այլ հատուկ հարցերով:

ՔՎԱԶԻԴԱՏԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕԺՏՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԼՐԱՅՈՒՅԻՉ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐ

Ազգային հաստատությունը կարող է լիազորված լինել ունկնդրելու և քննարկելու անհատական դիմումներ և բողոքներ: Դրանք կարող են հաստատությանը հանձնվել առանձին անհատների, նրանց ներկայացուցիչների, երրորդ կողմերի, ոչ կառավարական կազմակերպությունների, արհմիությունների կամ այլ ցանկացած ներկայացուցչական կազմակերպությունների կողմից: Այդպիսի դեպքերում և առանց վերը շարադրած ու հանձնաժողովների այլ լիազորություններին վերաբերող սկզբունքները խաթարելու, նրանց վստահված գործառույթները կարող են հիմնվել հետևյալ սկզբունքների վրա.

ա/ խաղաղ կարգավորման որոնում՝ հաշտեցման կամ, օրենքով նախատեսված սահմաններում, պարտադիր որոշումների կայացման միջոցով կամ, անհրաժեշտության դեպքում, կոնֆիդենցիալ հիմունքով,

բ/ տեղեկացնել դիմող կողմին իր իրավունքների, մասնավորապես, իր տրամադրության տակ գտնվող իրավական պաշտպանության միջոցների մասին և նպաստել դրանց հասու լինելուն,

գ/ ունկնդրել ցանկացած բողոք կամ դիմում կամ դրանք ուղարկել ցանկացած այլ պատկան մարմին՝ օրենքով նախատեսված սահմաններում,

դ/ առաջարկություններ տալ պատկան մարմիններին, մասնավորապես, օրենքներում, կանոնակարգերում և վարչական պրակտիկայում ուղղումներ և փոփոխություններ առաջարկելու միջոցով, հատկապես, եթե դրանք են այն դժվարությունների պատճառը, որոնց առնչվել են իրենց իրավունքների պաշտպանության նպատակով դիմում ներկայացրած անձինք:

Հիմնարար իրավունքների ցանկեր

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների ցանկ

ՄԻԵԿ	ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ
Հոդված 2	Կյանքի իրավունք
Հոդված 3	Ազատություն խոշտանգումներից , անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքից կամ պատժից
Հոդված 4	Ազատություն ստրկությունից
Հոդված 5	Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունք [կամայական ձերբակալման կամ կալանավորման արգելք]
Հոդված 6	Արդար դատաքննության իրավունք
Հոդված 7	Քրեական օրենքի հետադարձ կիրառությունից կամ պատժից ազատություն
Հոդված 8	Անձնական և ընտանեկան կյանքի , բնակարանի և մամակագրության հարգման իրավունք
Հոդված 9	Մտքի, խղճի և կրոնի ազատություն
Հոդված 10	Արտահայտվելու ազատություն
Հոդված 11	Խաղաղ հավաքների ազատություն
Հոդված 12	Անուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք
Հոդված 13	Արդյունավետ իրավական պաշտպանության իրավունք [ՄԻԵԿ-ով նախատեսված իրավունքների նկատմամբ ոտնձգությունների դեպքում]
Հոդված 14	ՄԻԵԿ-ով նախատեսված իրավունքների առնչությամբ ազատություն խտրականությունից
Հոդ. 1, Արձ. 1	Գույքի խաղաղ օգտագործման իրավունք
Հոդ. 2, Արձ. 1	Կրթության իրավունք
Հոդ. 3, Արձ. 1	Ազատ ընտրությունների իրավունք [օրենսդրի համար]
Հոդ. 4, Արձ. 1	Պարտքի համար կալանավորվելուց ազատություն
Հոդ. 2, Արձ. 4	Տեղաշարժի ազատություն
Հոդ. 3, Արձ. 4	Մեփական քաղաքացիության պետություն մուտքի իրավունք
Հոդ. 4, Արձ. 4	Ազատություն կոլեկտիվ վտարումից
Հոդ. 1, Արձ. 6	Մահապատժի վերացում
Հոդ. 1, Արձ. 7	Վտարման դեմ բողոքարկելու իրավունք
Հոդ. 2, Արձ. 7	Քրեական պատժի դեմ բողոքարկելու իրավունք
Հոդ. 3, Արձ. 7	Արդարադատության սխալի դեպքում հատուցում ստանալու իրավունք
Հոդ. 4, Արձ. 7	Միևնույն իրավախախտման համար երկու անգամ չդատվելու իրավունք [ne bis in idem]
Հոդ. 5, Արձ. 7	Ամուսինների իրավունքների հավասարություն

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների ցանկ

ՔՔԻՄԴ	ՄԱԿ-ի ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳԻՐ
Հոդված 1	Ժողովուրդների ինքնորոշման իրավունք
Հոդված 2	Արդյունավետ իրավական պաշտպանության իրավունք [ՔՔԻՄԴ-ով նախատեսված իրավունքների դեմ ոտնձգությունների դեպքում]
Հոդված 3	Հավասար իրավունքներ տղամարդկանց և կանանց համար [ՔՔԻՄԴ-ով նախատեսված իրավունքների մասով]
Հոդված 6	Կյանքի իրավունք
Հոդված 7	Ազատություն խոշտանգումներից , անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքից կամ պատժից
Հոդված 8	Ազատություն ստրկությունից
Հոդված 9	Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունք [կամայական ձերբակալման կամ կալանավորման արգելք]
Հոդված 10	Կալանավորման ընթացքում արժանապատիվ վերաբերմունք ստանալու իրավունք
Հոդված 11	Պարտքի համար կալանավորվելուց ազատություն
Հոդված 12	Տեղաշարժի ազատություն և սեփական պետություն մուտքի իրավունք
Հոդված 13	Վտարման դեմ բողոքարկելու իրավունք
Հոդված 14	Արդար դատաքննության իրավունք [այդ թվում՝ բողոքարկման, հատուցման իրավունքներ և « ne bis in idem »]
Հոդված 15	Ազատություն քրեական օրենսդրության հետադարձ կիրառությունից
Հոդված 16	Օրենքի առջև ճանաչում ստանալու իրավունք
Հոդված 17	Անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության հարգման իրավունք
Հոդված 18	Մտքի, խղճի և կրոնի ազատություն
Հոդված 19	Կարծիքի իրավունք և արտահայտվելու ազատություն
Հոդված 20	Ատելություն սերմանող խոսքի և պատերազմի քարոզչության արգելք
Հոդված 21	Խաղաղ հավաքների իրավունք
Հոդված 22	Միավորման ազատություն
Հոդված 23	Անուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք
Հոդված 24	Երեխայի իրավունքները ՝ ստանալ հավասար պաշտպանություն, անուն և քաղաքացիություն
Հոդված 25	Քվեարկելու և ընտրվելու իրավունք [հանրային կյանքին մասնակցելու իրավունք]
Հոդված 26	Խտրականության արգելք [հավասարություն օրենքի առջև]
Հոդված 27	Փոքրամասնությունների մշակութային, կրոնական և լեզվական իրավունքներ
Հոդ. 1, Արձ. 2	Մահապատժի վերացում

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ցանկ

SUՄԻՄԳ-

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳԻՐ

- Հոդված 1 Ժողովուրդների **ինքնորոշման** իրավունք (այդ թվում՝ ազգային հարստության և պաշարների իրավունք)
- Հոդված 2 Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների **առաջադիմական կիրառում** առանց **խտրականության**
- Հոդված 3 **Հավասար իրավունքներ** տղամարդկանց և կանանց համար [SUՄԻՄԳ-ով նախատեսված իրավունքների մասով]
- Հոդված 4 SUՄ իրավունքների **թույլատրելի սահմանափակումներ**
- Հոդված 5 SUՄ իրավունքների վերացում կամ **սահմանափակում**
- Հոդված 6 **Աշխատանքի** իրավունք
- Հոդված 7 Աշխատանքի **արդար և բարենպաստ պայմանների** իրավունք
- Հոդված 8 **Արհմիությունների** իրավունք
- Հոդված 9 **Սոցիալական ապահովության** և սոցիալական ապահովագրության իրավունք
- Հոդված 10 **Ընտանիքի, մայրերի և երեխաների** հատուկ պաշտպանություն
- Հոդված 11 **Բավարար կենսամակարդակի** իրավունք [սննդամթերքի, հագուստի և բնակարանի իրավունք]
- Հոդված 12 **Առողջապահության** իրավունք
- Հոդված 13 **Կրթության** իրավունք
- Հոդված 14 **Անվճար պարտադիր տարրական կրթության** իրագործման ծավալների ավելացում
- Հոդված 15 **Մշակույթի**, գիտության և արվեստի բարիքներից օգտվելու իրավունք